

ՊԱՆՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1879 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Դ.

22 ՅՈՒՆԻՍ 1879



Կ. ՊՕԼԵՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ

1879

**ԳԻՒՆՔ ԱՋԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ**

**ՄԱՅՐ ԳԻՒՆ**

Ստեփան փաշա Ասլանեան	Ա. Արեւելիք
Տիգրան էֆէնտի Եուսուֆեան	Բ. »
Յարութիւն էֆէնտի Մէրեհէմ-Գուլի	Գ. »
Մկրտիչ էֆէնտի Մելիքեան	Ա. Արեւելիք
Գասպար էֆէնտի Չէրազ	Բ. »
Գարեգին էֆէնտի Մելիքեան	Գ. »

**Ձեռննաստրեան դիւան**

Խորէն Արքեպիսկոպոս Նար-Պէյ  
Յովհաննէս Քահանայ Մկրեան  
Տիգրան էֆէնտի Եուսուֆեան

**Դատարարական դիւան**

Սէրփիլէն էֆէնտի  
Ստեփան փաշա Ասլանեան  
Գասպար էֆէնտի Չէրազ

**Կարուածոց դիւան**

Մինաս էֆէնտի Գափամաճեան  
Յովհաննէս էֆէնտի Կրճիկեան  
Աբիկ էֆէնտի Ունճեան

**Համարակալութեան դիւան**

Ստեփան էֆէնտի Փափազեան  
Քրիստոստուր էֆէնտի Ղազարոսեան  
Համբարձում էֆէնտի Մազպուլեան

**Երևոյթի յանձնարարութիւն**

Քրիստոստուր էֆէնտի Ղազարոսեան  
Ղազար էֆէնտի Հովուեան

**Յարաբերութեան դիւան**

Մկրտիչ էֆէնտի Էսաեան  
Բարսեղ էֆէնտի Հարաճեան  
Պօղոս էֆէնտի Պառնասեան

**Երաստութեան դիւան**

Ներսէս փարդապետ Ասլանեան  
Առաքել էֆէնտի Այթուն-Տիւրքի  
Նշան էֆէնտի Օտեան

**Նախաձեռնութեան դիւան**

Տնօրէն Ռափայէլեան էֆէնտի  
Յարութիւն էֆէնտի Մէրեհէմ-Գուլի  
Միհրան էֆէնտի Չօպանեան

**Խմբագրութեան դիւան**

Կարապետ էֆէնտի Խթիւնեան  
Գարեգին էֆէնտի Մելիքեան  
Համբարձում էֆէնտի Այաճաճեան

Սարգիս էֆէնտի Գալուքճեան  
Մկրտիչ էֆէնտի Մելիքեան

**ԱՋԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ**

ՔԱՅՈՒՄ 1879 ԱՄՆՆ

**Ն Ի Ս Տ Դ**

22 ՅՈՒՆԻՍ 1879

ՆԱԽԱԳԱՀ. — Տ. Մատթէոս Եպո. Եղմիրլեան (Պատր. փոխանորդ.)  
ԱՏԵՆԱՊԵՏ. — Ստեփան փաշա Ասլանեան (Առաջին Ասենապետ)

**ԱՋԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՄԱՆՔ**

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՄԱՆՔ	ԵՐԵՍՓՈՒՄԱՆՔ (Ա. Վ. Ճակ)	ԳՈՒՄԱՐՈՒ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՆ ԳՈՒՄԱՐՈՒՅԻ ՂՈՒՐԱ	ԵՐԵՍՓՈՒՄԱՆՔ (Գ. Վ. Ճակ)
1 Կարապետ Եպո. Սերոբեան Բ	24 Գրիգոր Պէրպլիբեան	47 Յ. Շիշմանեան Տօքթօր Բ	54 Աբիկ Ունճեան
2 Ամբրոսիոս Վ. Ռուբինեան Բ	22 Գէորգ Ստիվարճեան	48 Ս. Մէրեհէմ-Գուլի Բ	55 Գրիգոր Սէլիփիէճեան Բ
3	23 Խաչիկ Մանկաստրեան Բ	49 Միհրան Պահճի Գափուլեան	56 Գրիգոր Օտեան
4	24 Կարապետ Աղաբաբաճեան Բ	50 Պօղոս Թորգոսեան Բ	57 Սէրփիլէն
	25 Համբարձում Մազպուլեան Բ	51 Նիկօղոս Առճաճեան Բ	58 Ռափայէլեան Տօքթօր Բ
	26 Մինաս Գափամաճեան	52 Տրդատ Փափազեան	59 Միքայէլ Մօմճեան
5 Մատթէոս Եպո. Եղմիրլեան	27 Յովհաննէս Պօյաճեան Բ		60 Կարապետ Քաղապեան
6 Պօղոս Վ. Խօշտամեան	28 Ն. Մէլիքաբեան Տօքթօր	( Գ. Վ. Ճակ )	61
7 Յովհաննէս Ք. Մկրեան	29 Պօղոս Պառնասեան	Գասթմ քաշա	62
8 Գրիգոր » Աճէմեան Բ	30 Սարգիս Աղաբաբաճեան Բ	33 Գասպար Չէրազ	
	31 Սահակ Ապրօ	Բերա	
	32 Սենեքերիմ Մանուկեան		
9 Վահան Վ. Տ. Մինասեան Բ	33 Բարթեղ Քիւրքճիւղաշեան Բ	34 Աբիկ Ունճեան	
10 Յակոբ » Ա. Փափազեան	34 Առաքել Տէրպիլից	53 Գասպար Չէրազ	
11 Սահակ Ք. Տ. Սարգսեան	35 Գէորգ Ապառազեան Բ	Բերա	
12 Խորէն » Փօշիկլանեան Բ	36 Յ. Մէրեհէմ-Գուլի	54 Աբիկ Ունճեան	
	37 Ա. Եսաիս Կիրտազեան	55 Գրիգոր Սէլիփիէճեան Բ	
	( Բ. Վ. Ճակ )	56 Գրիգոր Օտեան	
	Պէլիկաշ	57 Սէրփիլէն	
13 Ներսէս Վ. Ասլանեան Բ	38 Միհրանիկ Կրճիկեան	58 Ռափայէլեան Տօքթօր Բ	
14 Եղնատիոս » Շիշմանեան	39 Ալիքսան Խօրասաճեան Բ	59 Միքայէլ Մօմճեան	
15 Սաքրա Ք. Ստեփանեան Բ	40 Բարսեղ Հալաճեան	60 Կարապետ Քաղապեան	
16 Յարութիւն Սերոբեան Բ	Եկնիգարոս	61	
	Եկնիգարոս	62	
	41 Մկրտիչ Քիւրքճիւղաշեան Բ	63 Յակոբ Նորատուկեան Բ	
	42 Սեպուհ Մազպուլեան Բ	64 Տիգրան Եուսուֆեան	
	43	65 Մկրտիչ Գաղաճեան Բ	
	44	66 Ա. Եսաիս Գօրգեան Բ	
Բ. Բացակայութիւն առաջին		67 Նշան Օտեան	
Բ. 2 Բացակայութիւն երկրորդ	Եկնիգարոս Ե. Ղալաքիա	68	
Բ. 3 Բացակայութիւն երրորդ	Բակիկաթար Ս. Խաչ	( Գ. Վ. Ճակ )	
	45 Մինաս Ֆէլիկեան	Ղուգղունճուգ Ե. Իճատիկ	
	46 Ստեփան Ասլանեան	69 Յովհաննէս Էսաեան Բ	
		70 Ստեփան Պէլիկճեան	

Գատրգիւղ	ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Մուշ
71 Կարապետ Շահապետի		121 Ստեփան Փափազեան
72 Մկրտիչ Մուրատեան	Կարին	Տիվրիկ
Նարլըգաբու.	101 Սինոն Մազաուտեան	122 Նշան Գարադաշ
73 Յակոբ Եղեմիան	Քոստանեա	Զեյթուն եւ Մարաշ
Եկեմիանայի Սամարիոյ	102 Մ. Փափազեան Տօթթօր	123
74 Պօղոս Մկրտիչեան	Աղբիւնուպօլիս	Տրապիզօն
Թօփգալու.	103	124 Տիգրան Տ. Ներսէսեան
75 Յովհաննէս Մարգարեան	Նիկովրիս	Պաղտատ
Էյուպ Ս. Եղիա եւ Ս.	104 Կ. Ս. Իւթիւճեան	125 Մելքօն Իսկէնտէրեան
Աստուածածին	Ակն	Տիգրանակերտ
76 Գարեգին Յ. Մեխեան	105	126 Միհրան Զօռանեան
Գուրուչէլմէ	Ղարաճիսար	Վան
77 Աստիա Իկրապաշեան	106	127
Հիսար եւ Պօյաճի գիւղ	Արաբկեր	Աղբամար
78	107 Կարապետ Իաշիկեան	128
Նոր գիւղ եւ Սրենիա	Բաղէշ	Հայեպ եւ Այնթապ
79 Ղազար Հովուեան	108	129
Պալատ	Պրուսա	Սեբաստիա
80 Մկրտիչ Գ. Էսահան	109 Քրիստոստօր Ղազարոսեան	130 Մկրտիչ Յ. Մեխեան
81 Յովհաննէս Կրիկեան	Եղոկիս	Ռուսնուխ
82	110	131
Քարակեօմիսկ	Ամասիա	Կարս
83 Սեպուհ Թիւրապեան	111 Համբարձում Ալաճաճեան	132 Արրահամ Յ. Այվազեան
84	Բայու.	Զմշկածագ
( Ե. Վիճակ )	112 Յովհաննէս Ազնաւորեան	133 Համբարձում Սարըէշիչեան
Սամարիա	Եղեսիս	Գաղատիս
85 Ալբրան Պէրբեան	113 Յակոբ Իւթիւճեան	134
86 Եղիազար Մեխեան	Մանճըլիս	Ատանա
87 Մինաս Ճափճաֆեան	114	135
88 Նազարէթ Շահապետի	Հաճըն	Սըղերդ
89 Յարութիւն Թիւրեան	115	136 Մատթէոս Ալէքսան
90 Յակոբ Արշակ	Երզնկա եւ Բաբերդ	Եօզրատ
91	116	137 Լօղօֆիթ Պալեօղեան
92	Թեքիրտաղ	Մալաթիա
93	117 Տիգրան Գ. Սինանեան	138 Գէորդ Վարդանեան
94	Կեսարիա	Իզմիր
95 Առաքել Ալթուն Տիւրբի	118 Գէորդ Գըլըճեան	139 Պապի Պապօեան
96 Ռէթէոս Պէլիկեան	Խարբերդ	Եգիպտոս
97 Սարգիս Արրահամեան	119	140
98 Մ. Արծրունի Տօթթօր	Պալքրէսեր	
99 Սարգիս Գալուքճեան	120	
100 Աթանազիոս Արապեան		

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

- Ա. Ընտրութիւն Երևանեան Յանձնախմբի Աղգային ժողովոյ :
- Բ. Վիճարանութիւն Պիւտճէի 79-80 ամի (Շարունակութիւն) :
- Գ. Տեղեկագիր Նախաձեռնութեան դիւանի ի վերայ ծրագրի եօթն յաւելուածական կէտերու Աղգային ժողովոյ Կանոնադրութեան :

## ԱՅԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ի բացակայութեան Ս. Պատրիարք Հօր Նորին Փոխանորդ Իզմիրեան Տ. Մատթէոս Արրազանի Նախագահութեամբ եւ Ատենայնատեան Երեսօրեան Տիգրան էֆէնտի Ատենայնապետեան ժամը ճիշդ 7 ին, ի ներկայութեան 28 Երեսօրեանաց, որոց թիւն 35 ի յանդեցաւ ի վերջէ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Երես 74. Բ. սիւնակ, « եւ յաւարտ շրջանին 500 ոսկոյ եւ ին պիտի ըլլայ » ցաւարտ շրջանին եւ ին :  
 Երես 75, Ա. սիւնակ, « Պէրպէրեան էֆէնտի թող գո՛ւ լինի երբ տեսնէ թէ այդ գումարը կարելի է եղեր գործածուի առանց մասուելու » պիտի ըլլայ « Պէրպէրեան էֆէնտի թող գո՛ւ լինի երբ տեսնէ այդ գումարին գործածուելը գաստարակութեան պիտոյից » :

Վարչապետմն նախընթաց Գ. ճիստի ստեղծագրութեան

Երես 78, Ա. սիւնակ, « եւ աղգային կրթութեան գործին վրայ հակելու », աստ պիտի աւելնայ « եւ գաստարակութեան ընդհ. պիտոյքը մատակարարելու » երբ հարցուց Իւթիւճեան Կ. էֆէնտի միջանկեալ կերպիւ՝ թէ ի՞նչ կը հասկնամ ընդհանուր պիտոյք ըսելով, պատասխանեցի, ազգ. վարժարանաց դասատուներ եւ մանկավարժներ եւ գասագրքեր պատրաստելու պիտոյքը : Յետոյ պիտի շարունակուի, « եւ անա իւր այդ սահմանադրական պաշտօնն եւ ին » :

Ատենայնապետ էֆէնտին նախընթաց Գ. նիստի ատենադրութեան վրայ ի դիտողութիւն կրախրից Երեսօրեաններն :

Երես նոյն, Բ. սիւնակ, « Ընդհանուր արոց մէկ տասներորդը նշանակեր է վարչութիւնը » . պիտի ըլայ « Ընդհանուր հաստիքից մէկ տասներորդը եւն » .

Երես 83, Ա. սիւնակ, ԺԲ. յոդուածին 34,00 զրը պիտի ըլայ 28,600 զրը թէ նպատակ տեսնանայ եւ թէ տարագրութեան ծախսոց մասին Ազգ. ժողովոյ աւելցուցած 3,400 զրը զեղչելով այդ պահանսի գումարէն, որպէս զի պիտի լինի իր հաւասարակութիւնը պահէ :

Աւելի զխաղութիւն տեղի չունենար, հետեւապէս Ատենապետ էֆէնտին քուէի կը զընէ նախորդ նիստի Ատենադրութիւնն եւ ժողովը միաձայն ընդունելով կը վախճուի զայն, եղած զխաղութեամբ հանդերձ :

2.

Խնդրագիր Թիւրքիստանեան Նիկողոս Էֆէնտիի

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Օրակարգին չանցած ժողովից կը հաղորդեմ քանի մը նախախնդիր եւ գրութիւններ, որոց առաջինն է Թիւրքիստանեան Նիկողոս Էֆէնտիի մէկ զիրն, որ ինչպէս զխաղ. Բարբերդի վիճակին կողմէ Երեսփոխան ընտրուած լինելով ժողովն իւր նախորդ նիստին մէջ մերժեց այս ընտրութեան վաւերացումն Ահաւասիկ սոյն գրութիւնը, որ Թիւրքիստանեան էֆէնտի կուզէ առ ժողովը :

Եւ հետեւապէս Ատենապետ էֆէնտին ընթերցաւ զիրն, որ ահաւասիկ .

Վսեմապատիւ Ատենապետ փաշա Ազգ. Երեսփ. Ընդհ. ժողովոյ Տէր .

Երեսփոխանական ժողովոյ վերջին նիստին մէջ, որ ի Վ. յունիսի, Խարբերդի գաւառին երեսփոխանական ընտրութեան նկատմամբ կատարուած քուէարկութիւնը

անհասկանալի, միանգամայն և անարժեք կացութեան մը մէջ կ'դնէ զիս, իմ անհատական ազգային իրաւանցս մասին :

Այս անորոշ կացութիւնը ստեղծուած լինելով միմիայն Ընդհ. ժողովոյ նոյն քուէարկութեանն, հարկ կ'դնէ իմ վրայ դիմելու զղակի Պատուարժան ատենից, ինդրելու որ բարեհաճի ժողովը որչափ մեկին կերպիւ իմ ազգային և անհատական իրաւանցս վիճակը :

Ընդհ. ժողովը զիս իբրև Ազգ. Երեսփոխան Ընդհ. ժողովոյ մէջ ընդունիլ չուզելովը, յայտնի չէ թէ զիս իբրև ի՞նչ կուզէ նկատել : Եթէ երեսփոխան չեմ կարող լինել, ուրեմն երեսփ. ընտրելի ալ չ'կարեմ լինել, և եթէ ո՛չ ընտրելի՝ ապա և ընտրու ալ ո՛չ ես, և եթէ ո՛չ ընտրող և ընտրելի կարեմ լինել, ապա ուրեմն ազգային իրաւանցս վայելմանէն զրկեալ պիտի համարուիմ, — բայց ասի ո՛ր օրինօք, ո՞ր իրաւամբ, ո՞ր դատաստանաւ և ո՞ր դատովճառով. — և միթէ Պատկառելի ատենից կ'ներէ՞ որ անհատ մը, առանց օրինաւոր դատաստանի և առանց բացատրութեան, զրկեալ դատապարտուի իւր բոլոր անհատական ազգ. իրաւունքներէն, որք այնքան նուիրական և սիրելի են իրեն :

Միթէ Ընդհ. ժողովը կընդունի՞ որ մի քանի երեսփոխանաց յարուցած ամբաստանութեան յայտարարութիւն մը ժողովոյց կողմէն արտասանեալ վճիռ նկատուի. — միթէ Ընդհ. ժողովը կընդունի՞ որ սե է դատարանի դատապարտութեան վճռէ զերժ անհատ մը՝ մի քանի երեսփոխանաց ստիսութեամբն ու վկայութեամբը՝ իր ազգային իրաւանց վայելմանէն զրկուի — Վերջապէս Ընդհ. ժողովը կարող է մէկու մը ապաղայ դա-

տապարտութեան պատահականութիւնը կամ հաւանականութիւնը՝ նորա այժմու իրաւանց վայելմանն արդեւ իչ պատճառ մը նկատել :

Ընտրական դործողութեան մը վաւերացմանը մէջ ընտրական օրէնքն և իշխողը, թէ սմանց դիպումական կամ քը — « մմանց կամքը » կըսեմ, նոյն քուէարկութեան մասնակցողաց թուէն աւելի թուով դիտմամբ առ այդ մասնակցիլ չուզող երեսփոխանաց ձեռնպահութիւնը նկատելով, և սմա մե՞ծ և նշանակութեան արժանի կարևորութիւն մը ընծայելով, ձեռնպահութիւն մը՝ որ այս տեսակ պարագայից մէջ խորհրդարանական լեզուաւ լուրեայն բողոք մը կ'նշանակէ կատարուելու վրայ եղած գործողութեան մը դէմ :

Երեսփոխանի մը ընտրութիւնն օրինաւոր և հետեւարար վաւերական ճանցը ուելու համար, Սահմանադրութեան ընտրական օրինաց արամադրութեանց որոշապէս պահանջած պայմաններէն դուրս ուրիշ ի՞նչ պայմաններ կ'պահանջուի, և Ընդհ. ժողովը կանխաւ որոշած ու գործադրութիւնը հրամայած է այդ ընտրական յաւելելու պայմանաց, որոց ենթակայ դատուելու պարտաւորեալ լինի նորընտիր երեսփոխան մը :

Ընդհ. ժողովը զիս իբր երեսփոխան ճանչիլ և ընդունել չուզելովը՝ թերևս ասկից առաջ մամայ միջոցաւ իրեն պատւոյն դէմ եղած կարծեցեալ յանցանք մը պատժել խորհած ըլլայ իմ անձիս վրայ, իսկ խորհած է արդեօք թէ զիս իբրև ի՞նչ կ'պատժէ, — իբրև լրագրապետ թէ իբրև երեսփոխան, խորհած է արդեօք թէ ի՞նչպիսի յանցանք է իւր պատժել կարծած յանցանքը, լրագրական

յանցանք՝ թէ խորհրդարանական յանցանք :

Եթէ իբրև լրագրապետ կ'պատժէ զիս, Ընդհ. ժողովը կ'ընդունի՞ արդեօք թէ ինքը լրագրական կամ անհատական յանցանքներն պատժելու իրաւունք և ձեռքնհասութիւն ունեցած ըլլայ, և կամ Ընդհ. ժողովն անպատուած ըլլալու յանցանքներն ազգ. իրաւանց զրկմամբ պատժել անօրինող օրինաց արամադրութիւն մը կեցած լինի :

Իսկ եթէ խորհրդարանական յանցանք մ'է զոր պատժել ուղած է, Ընդհ. ժողովը զիս իբրև երեսփոխան ճանչելէ առաջ կ'կարծէ՞ թէ իրաւունք ունենայ ինձ դէմ ատենական կամ կանոնադրական պատժոյ վճիռ արտասանելու :

Ես կարգապահութեան կամ կանոնադրական պատժէ խոյս չեմ տար, կը յօժարիմ կրել զոյդ՝ եթէ օրինական եւ յանկաւ արժանի վճռուիմ պատժոյ, բայց չեմ հասկնար թէ երեսփոխան չ'ճանչցուած մէկը ինչպէ՞ս ատենական պատժոյ ենթարկել կուզուի, և այն առանց սե է դատաստանի, և ի բացակայութեան իմում, անխնդ ամբաստանութիւնք տեղալով իմ վրայ, որոց դէմ յախտեան կը բողոքեմ և զայդ արտասանող բերանը պատասխանատու կ'համարիմ յարագային :

Նպատակս է՝ Խարբերդի գաւառէն ինձ վերընծայեալ Ազգային երեսփոխանութեան ամբողջ իրաւունքը պահանջել . — այդ իրաւունքն Ազգային է և Ընդհ. ժողովոյ, առ որս կ'թողում յօժարական պաշտպանել այդ իրաւունքը՝ եթէ բընարարուած կ'նկատէ, ինչպէս որ ալ այնպէս է, իսկ այս միջադէպին մէջ իմ անհատական ազգային իրաւունքներս կան վտանգի ենթարկեալ, զորս ազատելու

համար ստիպուած եմ Պատուարժան առնելից դիմել, յայտնելով միանգամայն թէ իմ այդ ազգային իրաւանցս ինձ վերադարձը թախանձանօք կը պահանջեմ, և բնաւ չեմ հրաժարիր յայդ ցանէ, ի հարկին երեսփոխանութիւնս ալ առ այդ զոհելու պատրաստ լինելով, եթէ զայս ևս յինէն պահանջել արժան տեսնուի, միայն թէ Ընդհ. ժողովն այն վարմունքը բռնէ ինձ նկատմամբ, ինչ վարմունք որ արժան և օրէն է բռնել իւր ազգային իրաւանց կատարելագէտ և լիովին վայել մանր մէջ գտնուող անհատի մը նկատմամբ, և իմ անհատական ազգային աւորոյ կացութիւնս որոշէ:

Այս է իմ միակ խնդիրքս. վսեմ Առննապետ Տէր, զոր բոլորովին Ձեր կորովամտութեանը և արդարաւորութեանը յանձն առնելով, Ձեզ կ'իմաստիւրեմ և կ'իժողում որ իմ այս խնդիրքս, որոյ իրաւացի լինելուն Ձեր վստահութիւնն ևս համոզուած լինել կարծելու իրաւունք ունիմ, ինչ ձեռք և կերպարանի ներքեւ որ արժան և հաճոյ թուի Մայր Գիւանիդ, այնպէս առաջի առնէք Ընդհ. ժողովոյ ատենին, նախորդ նստի ատենագրութիւնը վաւերանալու պահուն, առ որ կը պատկանի սա, և ժողովոյդ միջին և աւորոյ թողած այս կէտին վրայ իւր որոշումն ու վճիռն ստանալով ինձ հազորդել բարեհաճիր:

Որոյ վասն կանխաւ յայտնելով իմ խորին և երախտագիտական շնորհակալութեանս հաւատարին,

Մեամ ամենայն խոնարհանօք  
Խարբերդի գաւառէն ընտրեալ  
Իսկ դեռ չվաւերացեալ  
Ազգային Երեսփոխան  
Նիկողայոս Մ. Թիւրքմենաեան  
18/30 յունիս  
Կ. Պոլիս

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը տեսնէք, Տեսնէք, որ Թիւրքմենաեան էֆէնտի իւր ընտրութեան նկատմամբ արուած որոշման դէմ կը բողոքէ: Ձեմ ուզեր ևս չունիմ իրաւունք խնդրոյն միջանդիտու, այլ միայն ժողովը ժամադրեալ շրջանէն համար՝ պարտ կը համարիմ յիշեցնել որ այս խնդրագիրը կամ բողոքագիրն, ինչպէս որ արժան դատի անուանել ժողովը, հարկ է ըստ կանոնի յղել Նախաձեռնութեան գիւանին, և անոր քննութեան տեղեկագիրն ստանալէ ետեւ՝ պէտք եղած որոշումը սալ: Աստի ժողովն կամը կը հարցնեմ այս մասին. եթէ գիտողութիւն չկայ յղումը կը կատարուի:

ԲԱՐԱԲԱՇԵԱՆ Ն. ԷՖ. — Ես կ'առաջարկեմ նախաձեռնով ընդունիլ կամ մերժել այս խնդիրը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գիտել կուտամ դարձեալ որ ներկայացեալ թուղթը բողոք մը կը պարունակէ ժողովին մէկ որոշման դէմ, և աւելի կանոնական է ևս պատշաճից համաձայն յղել զայն ի նախաքննութիւն:

ԲԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ես այ այն կարծիքն ունիմ թէ պէտք է նախաքննութեան յղել, սակայն զայս ևս կուզեմ յայտնել թէ ժողովն ըստ ներքին կանոնագրի կրնայ նաև նախաձեռնով լուծել խնդիրն, առանց նախաքննութեան յղելու:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երկու կարծիք կայ այս մասին, և ժողովին քուէն պէտք է լուծէ խնդիրը:

Եւ Առննապետ էֆէնտին քուէի զնելով խնդիրը՝ ժողովը 4 քուէի ընդդէմ 21 քուէով ԿՈՐՈՇԷ յղել զայն նախաձեռնութեան գիւանին ի նախաքննութիւն:

ԱԼԱՃԱՃԵԱՆ Հ. ԷՖ. — Բայց սա պայմանաւ որ այդ գիւանը մինչեւ տասն ևս կինդ օր շնորհ ընէ բերել իւր քննութեան տեղեկագիրը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եստ ազգ:

ՓԱՓԱՋԵԱՆ Մ. ԷՖ. — Այդ պայմանն Ալաճաճեան էֆէնտի առաջարկեց ևս չկրնար իբր ժողովին կամը չկատարել: Ասկէ զատ՝ պէտք է գիտնալ նաև որ ըստ կանոնի ժողովը չը կրնար իւր որոշումն ետ դառնալ կամ զայն վստահել, գոն և երեք ամիս չանցած, հետեւաբար տեղի չկայ նախաքննիչ գիւանին աշխատութեան պայմանաժամ սահմանելու:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Առաջարկութիւնն Երեսփոխանի մը կողմէն եղաւ ևս գիւանը՝ կարծեմ չվերագրեց զայն ժողովին: Գիւանը կը խնդրէ մ'այն նախաձեռնութեան գիւանէն որ իրեն յանձնուած աշխատութիւնն որքան հարկ է շուտով կատարէ, և կը յուսայ որ երբ յապագան պատճառ մ'ունենայ, կը հաճի կանխել զեկուցանել ժողովին:

3.

Երեսփոխանական նորոգ ընտրութիւնք

Մայրաքաղաքիս քանի մը թաղերուն կողմէ Երեսփոխանական նորոգ ընտրութիւնք կատարուած, և Քաղ. ժողովոյ կողմէ ծանփագրով հաղորդուած էին Ազգ. ժողովոյ: Աստեանապետ էֆէնտին սոյն ընտրութեանց վերաբերեալ գրերը մի առ մի ներկայեց ժողովին, որք ահաւասիկ:

Մանօրագիր Քաղ. ժողովոյ  
Վսեմափայլ Առննապետ փաշա  
Ազգային ժողովոյ

Սամաթիոյ թաղին պահսած 3 երեսփոխանաց տեղ նոր ընտրութիւն կատարելով Ընտրողական ժողովն իր տեղեկագիրը զրկած է, որով կ'ձանուցուի թէ յիշեալ թաղին երեսփոխան ընտրուած են՝  
Ղազարոսեան Սահակ էֆէնտի  
Թիւյսիւղեան Սեպուհ »  
Նորատունկեան Գարրիէլ »

Պալատի թաղին պահսած մէկ երեսփոխանին տեղ նոր ընտրութիւն կատարելով Ընտրողական ժողովն իր տեղեկագիրը զրկած է, որով կը ձանուցուի թէ յիշեալ թաղէն երեսփոխան ընտրուած է՝  
Կալաֆեան Յովէֆի էֆէնտի:

Ղալաթիա, Պէյքօզ և Գանալլի միացեալ թաղից պահսած մէկ երեսփոխանին տեղ նոր ընտրութիւն կատարելով Ընտրողական ժողովն, տեղեկագրերը հասած են, որով կը ձանուցուի թէ յիշեալ թաղից երեսփոխան ընտրուած է՝  
Մամիկոնեան Միքայէլ էֆէնտի:

Պատրիարքարանս քննեց վերոյիշեալ ընտրելոց սահմանագրական հանգամանքը, և Սահմանագրութեան համաձայն գտաւ բաց ՚ի Նորատունկեան Գարրիէլ էֆէնտիէն, որոյ տարիքն անբաւական շանուած է:

Սոյն ընտրութեանց տեղեկագրերը և ընտրելոց կողմէ եկած գրութիւնները հանդերձ ծանօթագրութիւն մատուցանելով Ազգային ժողովոյ, ի պարտ ու պատշաճ տօրէնութիւն:

Մնամք յարգանօք  
Ի դիմաց Քաղ. ժողովոյ  
Առննապետ Վ. Առննապետի  
Ա. Ալբուն Տիւրքի Լ. Պալեօգեան  
20 յունիս 1879  
Ի Պատրիարքարանի Հայոց  
Կ. Պոլիս

Կրկին Տեղեկագիրք Ընտրող. ժողովոյն  
Ղալաթիոյ

Գերապատիւ Սրբազան Հայր

Ղալաթիա, Պէյքօզ և Գանալլի միացեալ թաղից կողմէն ազգային երեսփո

խանին ընտրութեան համար հրահանգ ստանալով Չեր Սրբազնութենէն, կաշմուեցաւ Ընտրողական ժողովս, որ ըստ օրինի նախապատրաստութիւնները առնելով, հրաւիրեց իւր ընտրողներն ի քուէարկութիւն ի 26 մայիսի: Ընդ ամենը 21 ընտրողներէն 12 ը մասնակցեցան քուէարկութեան և քուէհամարի արդիւնքը հետեւեալն եղաւ,

Միքայէլ էֆ. Մամիկոնեան քուէ 11  
Տելեմաք » Էքսէրճեան » 1

Արդ՝ ըստ որում ի Պէյթօղ 38 քուէարկու և ի Գանտիլի 17 քուէարկու գըտնուած են, որք Ղալաթիոյ քուէարկուաց թուոյն հետ միանալով կըլլան 67 քուէարկուք երկոց միացեալ թաղից կ զմէն հետեւաբար ոչ որ բացարձակ առաւելութիւն ստացած ըլլալով, հարկ կըլլայ համեմատական քուէարկութեան գիծել: Եւ ըստ որում Միքայէլ էֆ. Մամիկոնեան 20 քուէ ի Պէյթօղ և 11 քուէ Ղալաթիա ստանալով, ընդ ամենը 31 քուէ ունեցաւ, ամենէն առաւելագոյն քուէն. ուստի Մամիկոնեան էֆէնտին իրաւունք ստացաւ ընտրելեաց մին լինելու: Երկրորդ ընտրելին ըստ արդեանց քուէհամարի Պէյթօղի թէև հարկ էր որ լինէր Մագսուտեան Վսեմ Սիմօն Պէյ, որ 15 քուէ ստացած է, սակայն ըստ որում նա արդէն կարնոյ դաւառէն երեսփոխան ընտրեալ և Աղգային ժողովէն վաւերացեալ է, հարկ կըլլայ ուրեմն Եիւզպաշիեան Մելքոն էֆէնտին երկրորդ ընտրելի նկատել, ըստ որում 11 քուէ ստացած է ի Գանտիլի:

Հետեւաբար միացեալ թաղիցս ընտրողները պիտի սարտաւորին երկրորդ անգամ քուէարկութեան գիծել, վերոյիշ-

եալ երկու ընտրելեաց մին իրենց քուէովն ընտրելու համար: Ըստ այսմ Չեր Սրբազնութեան հրահանգին սարտաւորվ

Մեամք  
Ի Գիմաց Ընտրող. ժողովոյ Ղալաթիոյ  
Նախագահ  
Տաճատ վարդապետ

Ատենադպիր Ատենապետ  
Պետրոս Խորասանճեան Ս. Գ. Պ. Փախագեան  
27 Մայիս 1879

Ղալաթիա  
Գեր. Սրբազան Հայր

Ղալաթիոյ, Պէյթօղի և Գանտիլիէ մացեալ թաղից կողմէն ընտրելի ազգերեւոյթիսանին քուէարկութեան արդիւնքը համեմատականի մէջ մնալուն համար, Ղալաթիոյ Ընտրողական ժողովս երկրորդ անգամ քուէարկութեան հրաւիրեց զընտրողները ի 16 յունիսի, և 21 ընտրողներէն 9 ին անձամբ մասնակցութեամբ քուէհամարի արդիւնքն հետեւեալն եղաւ.

Միքայէլ էֆ. Մամիկոնեան քուէ 8  
Մելան էֆ. Եիւզպաշիեան » 1

Եւ ըստ որում Միքայէլ էֆ. Մամիկոնեան ի Պէյթօղ ստացած էր 38 քուէ, և ի Գանտիլի 6 քուէ. հետեւաբար ընդ ամենը 52 քուէ ստացած եղաւ, մինչդեռ Եիւզպաշիեան էֆ. 13 քուէ ի Գանտիլի և 1 քուէ ի Ղալաթիա ստացած է, ընդ ամենը 14 քուէ. որով Մամիկոնեան Միքայէլ էֆ. երեսփոխան ընտրուած եղաւ միացեալ թաղիցս կողմէն, Ըստ այսմ ընտրողական ժողովոյս կողմէն Մեծ Մամիկոնեան Միքայէլ էֆէնտին ժանուցուելով, իւր յանձնառութեան գիրը

ինդրուեցաւ. զոր աստ ներիակելով մատուցանեմք Չերգ Սրբազնութեան:

Ի գիմաց Ընտրող. ժողովոյ Ղալաթիոյ  
Նախագահ  
Տաճատ վարդապետ

Ատենադպիր Ատենապետ  
Պետրոս Խորասանճեան Ս. Գ. Պ. Փախագեան  
20 յունիս 1879  
Ղալաթիա

Կրկին Տեղեկագիրք Ընտրող. ժողովոյն  
Գանտիլիի

Սրբազան Հայր

Ըստ հրահանգի Սրբազնութեանդ, այս կիւրակէ, որ է Մայիս 6/18, գիւղիս կողմանէ ընտրուելիք Աղգ. երեսփոխանին համար՝ քուէարկութիւնը կատարելով 27 ընտրող թաղեցիներէն միայն 14 ը անձամբ և 3 ը նամակաւ քուէարկութեան մասնակցելով, տասն և մէկ քուէի բացարձակ առաւելութեամբ Մեծ. Մելքոն էֆէնտի Եիւզպաշիեան, թաղիս կողմանէ Աղգ. երեսփոխան ընտրուելը կը փութամք Սրբազնութեանդ տեղեկագրել: Մեամք խորին յարգանօք

Ի գիմաց Ընտրող. ժողովոյ  
Նախագահ

Յովնաննես քննյ. Քալիմբեարեան  
Ատենադպիր Ատենապետ  
Մարտիլ Գրագիրեան Տիգրան Մանկասարեան  
6 Մայիս 1879  
Գանտիլի

Սրբազան Հայր

Այս կիւրակէ որ է 10 Յունիս, գիւղիս կողմանէ Աղգ. երեսփոխանու-

թեան համար, միայն Մեծ. Մամիկոնեան Միքայէլ և Եիւզպաշիեան Մելքոն էֆէնտիներուն համար քուէարկութիւն ընելով 27 ընտրող թաղեցիներէն 12 ը անձամբ և 7 ը նամակաւ քուէարկութեան մասնակցեցան և 13 քուէ Եիւզպաշիեան էֆէնտին և 6 քուէ ալ Մամիկոնեան էֆէնտին ստացած լինելին Սրբազնութեանդ տեղեկագրելով:

Մեամք խորին յարգանօք  
Ի գիմաց Ընտրող. ժողովոյ  
Նախագահ  
Յովնաննես քննյ. Քալիմբեարեան

Ատենադպիր Ատենապետ  
Մարտիլ Գրագիրեան Տիգրան Մանկասարեան  
10 Յունիս 1879  
Գանտիլի

Տեղեկագիրք Ընտրող. ժողովոյ  
Պէյթօղի

Գերատաախ Ս. Հայր  
Պատրիարքական Փոխանորդ:

Պէյթօղի, Ղալաթիոյ և Գանտիլի միացեալ թաղից կողմէն ընտրուելիք Աղգ. երեսփոխանին քուէարկութեան արդիւնքը համեմատականի մէջ մնալով հետեւեալ պատուարժան երկու անձինքը՝

Քուէ  
1. Մամիկոնեան Միքայէլ էֆէնտի 31  
2. Եիւզպաշիեան Մելքոն » 12

ստացած էին:  
Արդ այս համեմատութեանց վրայ վերստին քուէարկութիւն ընելու Չեր Բ. Սրբազնութեան ազգարարութիւնը ընտրողական ժողովս անվճարպէս նկատողութեան առած և նախընտաց երեքշաբթի 5 յունիս օրէ: սկսեալ հրաւեր կարգա-

ցած էր բոլոր թաղիս ընտրողական իրաւունք ունեցող անձանց, որպէս զի մինչև այսօր յունիս 10 կիւրակէ ի ժամ 8 իրենց քուէներն պատրաստելով բերեն ներկայնն ընտրողական ժողովոյս :

Ըստ այսմ յորոշեալ ժամուն քուէհամարի գործողութիւնը կատարուելով թաղին վաթսուն ընտրողական իրաւունք ունեցող անձինքներէն երեսուն և ութ հոգի, ութը անձամբ և երեսունը նամակաւ մասնակցած էին քուէարկութեան, և արդիւնքը ցուցուց, թէ Մամիկոնեան Մեծ. Միքայէլ էֆէնտի երեսուն և ութը քուէ ստացեր էր :

Աւերորդ չը համարիր ընտրողական ժողովս այս անգամ ևս իւր տեղեկագրին մէջ յաւելուլ թէ առաջին քուէարկութեան մէջ ալ երեսուն և ութ անձինք քուէարկութեան մասնակցած էին և քուէհամարի արդիւնքը այն ատեն ցոյց տուաւ, որ

- Մեծ. Միքայէլ էֆ. Մամիկոնեան 20
- Վսեմ. Սիմոն Պէյ Մաքսուտեան 15
- Մեծ. Տ. ք. Միհրան էֆ. Վարդազարեան 2
- Վսեմ. Ստեփան փաշա Արսլանեան 1

ստացեր էին, և այն ատեն մանրամասն տեղեկագրել զանց ըրած էր :

Արդ ընտրողական ժողովս իր սոյն երկրորդ տեղեկագրիւր ներկայելով Չերի. Սրբազնութեան կը փութայ յայտնել իր խոնարհ յարգանաց հաւաստիքը, որով և մեք մնամք խոնարհ որդիք :

Նախագահ Ընտրող. Ժողովոյ  
Իգնատիոս. վրդպտ. Շիշմեան.

Վրդանես վրդպտ. Բապուճճեան

Ի դիմաց Ընտրող. Ժողովոյ

Վսն. Ատենագպրի Ատենապետ

Յակոբ Սիմոնեան Միհաս Պետրոսեան

Յովսէփ Արսեան

10 յունիս 1879

Պէյքօղ

Յանճնատագիր բնութելոյն

Արժանապատիւ Հայր

Նախագահ Ընտրող. Ժողովոյ

Պատիւ ունեցայ ընդունիլ Չեր Արժանապատուութեան նամակն, որով կը ծանուցանէք նուաստիս Ազգային երեսփոխան ընտրուիլն ՚ի դիմաց Ղալաթիա, Պէյքօղ և Գանատիլի միացեալ թաղից :

Այս երեք թաղից միաձայն ինձ ըրած այս պատիւը չը կրնալով մերժել, կը յայտնեմ որ պատրաստ եմ ընդունիլ ինձ յանձնուած երեսփոխանական պաշտօնը, միշտ սիրելի Ազգիս օգտին ծառայելու սկզբանս մէջ անյողդող մնալու պայմանաւ :

Մնամ Չերդ Արժանապատուութեան  
Կ. Պօլիս Անձնուէր  
19 յունիս 1879 Մ. Մամիկոնեան

(Սոյն գրութեանց ընթերցումն ետև.)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Տեղեկացար արդէն որ Ղալաթիոյ, Պէյքօղի, և Գանատիլի միացեալ թաղից կողմէ՛ Ազգային երեսփոխան ընտրուած է Միքայէլ էֆէնտի Մամիկոնեան, և Վարչութիւնն իւր ծանօթագրին մէջ հաստատած է անոր ընտրելութեան հանգամանքները։ Իսկ դուք գիտողութիւն ունիք արդեօք ընտրութեան նկատմամբ :

Սոյն ընտրութեան դէմ ու եւ զիտողութիւն տեղի չունենալով Ատենապետ էֆ. քուէի դրաւ զայն և ժողովը միաձայն անոր օրինաւորութիւնը հաստատելով Վ.Ա.Ե.Բ.Ա.ՅՈՒՅ. և հետեւապէս Ազգ. երեսփոխան ՀՈՉԱ.ԿԵՅ.:

Միքայէլ էֆէնտի Մամիկոնեան :

Տեղեկագիր Ընտրող. Ժողովոյ  
Պալատու.

Ամենապատիւ Ս. Հայր

Նախագահ Ազգ. երեսփոխանական ժողովոյ

Ինչպէս որ ծանօթ է Չերդ Ամեն. Սրբազնութեան, մեր նախորդ քուէարկութեան մէջ Օտեան Վսեմ. Գրիգոր էֆէնտին թաղիս կողմէն երեսփոխան ընտրուած էր, սակայն Բերայի կողմէն ևս ընտրուելով մեզ իւր հրաժարականն տուած էր, ուստի այս անգամ 20 մայիս կիւրակէ ի ժամ 6 ըստ Չեր բարձր հրահանգի կրկին քուէարկութիւն կատարուելով 150 քուէարկուներէն միայն 63 քուէ անձամբ տուող եղաւ, և այս քուէներէն 54 քուէի բացարձակ առաւելութեամբ Մեծ. մեքենագործ Յովսէփ էֆ. Գալաթեան ընտրուեցաւ, ուստի որչափ ալ քուէարկութեան արդիւնքն իրեն հաղորդելով ջանացինք հաճութիւնն առնուլ, սակայն փոխանակ հաւանութիւն տալու իւր հրաժարականն տուած ըլլալով մեք ևս զայն ներկայիս Չերդ Ամեն. Սրբազնութեան կը զրկեմք, ինչը ըրելով որ հաճիք զինքը համոզելով ընդունել տալու շնորհն չզլանալ, ոյր վասն մեր խորին գոհունակութեան և մեծաբանաց հաւաստին մատուցանելով

Կը մնամք Չերդ Սրբազնութեան խոնարհ ծառայք

Նախագահ Ընտրող. Ժողովոյ  
Գեորգ ԲՆԵՂ. Փալազեան

Ատենագպրի Ատենապետ  
Պօղոս Տ. Յակոբեան Ա. Յ. Գատրեան

79 Մայիս 30

Պալատ

Հրաժարագիր բնութելոյն

Սրբազն Հայր

Պալատու թաղէն երեսփոխան ընտրուիլս ծանուցանող Չեր մէկ նամակը ընդունած ըլլալով՝ կ'փութամ պատասխանել առ այն :

Թաղիդ Ընտրողական ժողովին և արդոյ ընտրողաց շնորհակալութիւն յայտնելէ ետև, ինձ նկատմամբ իրենց ցոյց տուած համարմանն ու վստահութեանը համար, այդ խիստ կարևոր և ծանր պաշտօնն ընդունելու անկարող ըլլալս կ'յայտնեմ, ծանրածանր զբաղմանցս ազատաւ :

79 Մայիս 22  
Պալատ Յովսէփ Գալաթեան

Մաքրակրօն

Տէր Գեորգ Հայր Փալազեան Նախագահ Ընտրողական ժողովոյ

(Սոյն գրութեանց ընթերցումն ետև.)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը տեսնէք որ Պալատու թաղին կողմէ՛ Յովսէփ էֆ. Գալաթեան Ազգ. երեսփոխան ընտրուած եւ Գաղ. ժողովն հաստատած է անոր ընտրելութեան պայմաններն Եւթէպէտ Գալաթեան էֆէնտի հրաժեշտ կուտայ պաշտօնէն, բայց որպէս զի մեր գործողութեանց մէջ շփոթութիւն չյառնէ, կարծեմ պէտք է ընտրութեան օրինաւորութիւնը նախ քուէարկել, և այնուհետև հրաժեշտ խնդրոյն վրայ որոշում մը տալ :

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻՑ ԷՖ. — Անտարակոյս պէտք է նախ ընտրութեան օրինաւորութիւնն որոշել, որպէս զի ընտրելոյն պաշտօնը վաւերանալով կարելի լինի անոր հրաժարականը ի նկատի առնուլ, որպէս զի եթէ մեր մէջ կան

անձինք՝ որ չեն ուզեր ընդունիլ անոր հրա-  
ժեշտը, կարենան տալ իրենց քուէն:

Հետեւապէս Առննապետ Էֆէնտին Պա-  
լատու երեսփոխանական ընտրութիւնը քուէի  
դրու, եւ ժողովը միաձայն անոր օրինաւորու-  
թիւնը հաստատելով ՎԱԻԵՐԱՏ.ՈՒՅ, եւ Ազգ.  
երեսփոխան հռչակեց:

Յովսէփ Էֆէնտի Գալաթիան

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ընտրութեան օր՝ նա-  
ւորութիւնը հաստատեցիք, պէտք է որոշուի  
այժմ հրաժարականի խնդիրը: Նորընտիր ե-  
րեսփոխան Պալատիան Էֆէնտին խորանձնա-  
կան զբաղուելու ստարկելով հրաժար կուտայ,  
որպէս է պատճառն, ուստի պարզապէս քուէի  
պիտի գնեմ լ.բ. հրաժարականը:

ՄԷՆԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՅ. — Թէ եւ պարզ  
է պատճառը, սակայն իւր հրաժեշտին ընդու-  
նելութիւնը չենթադրեր այս: Ընտրելու իւր  
զբաղմանց ծանրութիւնն առարկելով ի բաց կը  
թիփախէ պաշտօնը: Մեր մէջ ալ կը գտնուին  
իրեն շափ բաղձազրայ անձինք, սակայն չեն  
նահանջեր ծառայութենէ, ուստի կրնանք  
կարծել խնդրել Պալատիան Էֆէնտին՝ որ  
իւր անձնական զբաղմանց վրայ չաւելու  
կու շարժան տարածել: քստի մը ժամուրդ-  
բաղմանը եւս ազգին գործոցը համար, մանա-  
ւանդ որ ընտրող թաղի ալ կը ցանկայ որ մեր  
ժուրի հրաժարականը:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Կան մեր մէջ  
չատեր, որ պաշտան կրտսանձնեն, սակայն չեն  
վարեր, եւ նրառելն բացակայ կը մնան սակայ-  
նկ Պալատիան Էֆէնտին՝ այս պատուական  
անձն առջի օրին կը յատարարել թէ չէ կարող  
ընդունիլ պաշտանն եւ կը հրաժարի:

Պալատի ի լ. բ. ներկաութիւնը մեր մէջ,  
սակայն կը խորհիմ թէ մի գուցէ մերմելով իւր  
հրաժեշտը չկարենամք օգուտ մը ձեռք բերել,  
եւ ժամանակի կորուստ ունենանք միայն:

ՔԱՐՈՒԱՆԵԱՆ Ն. ԷՅ. — Փորձով զիտ-  
նալով թէ թաղերու մէջ երեսփոխանական ընտ-

րութիւնը որքան դժար են, եւ կշռելով ընտ-  
րելոյն անձնական արժանիքն, եւ եւս կը կար-  
ծեմ թէ պէտք է փորձ մընել համարելու  
համար զինքն որ ես ասնու հրաժարականը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Պալատի Ընտրող ժո-  
ղովին ալ միեւնոյն խնդիրն ըրած է արդէն իւր  
տեղեկագրով, ուստի Սրբալան նախադա՛նն  
կրխողը որ հաճի տեղեկութիւն տալ ժողո-  
վին թէ արդեօք Պալատիան Էֆէնտին հե-  
րանա՛կցեցաւ եւ յորդոր կարգաց անոր՝ պա-  
տանն ընդունելու համար:

ՄԷՐԱԶՆ ՆԱԽԱԳԱՆ — Դեռ ո՛չ, վասն  
զի Ազգ. ժողովոյ կողմէն ընտրութիւնը չլուե-  
րացած, չէի կրնար, կարծեմ, զինքը յորդորել  
ընտրութիւնն ընդունելու համար:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Ես կը կարծի  
մէ պէտք եղած յորդորն եղած է արդէն, եւ  
ասոր համար պահ մ'առաջ բրի այն գիտողու-  
թիւնն, երբ կառաջարկուէր յորդորել զինքը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Աւրեմն կը համակեր-  
պիք այժմ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Այո՛:

Հետեւապէս Առննապետ Էֆէնտին քուէի  
դրու նորընտիր երեսփոխան Պալատիան Է-  
ֆէնտին հրաժարականը եւ ժողովը միաձայն  
ՄԵՐԺԵՏ զայն, որոշելով որ Ս. Նախագահն յոր-  
դորէ ընտրեալը՝ պաշտանն ընդունելու համար

Տեղեկագիր քննող ժողովոյ  
Սախարոյ

Պերապատիւ Պատրիարքական փո-  
խանորդ և Նախագահ Ազգ. ժողովոյ

Ձեր Սրբազնութեան ապրիլ 5 թուա-  
կան պաշտօնագիրն ընկալանք, որով կը  
ծանուցանէիք մեզ թաղին պակասած ե-  
րեք երեսփոխանաց անդ նորոգ ընտրու-  
թիւն կատարել, Ազգ. ժողովոյ առաջի-

կայ բացմանն առնելու յառաջ, և արդիւնքը  
տեղեկագրիլ անյայտալ:

Ըստ այսմ յանձնարարութեան՝ ապ-  
րիլ 8 կիրակի օրն անմ ջապէս Ընտրողա-  
կան ժողով գումարեցինք, թաղեցւոցմէ  
չորս հոգի աւելցնելով թաղական խոր-  
հրդոյս վրայ: Յետոյ երեսփոխանական  
ընտրողաց ցանկը քննութեան առնելով  
ընտրելոյց ցուցակն հեռ, ապրիլ 15  
կիրակի օրն Ս. Եղեղեցւոյս բակը կախե-  
ցինք ութ օր, յաւորէ կիրակին քուէար-  
կութիւն և քուէհամար կատարելու հա-  
մար հոգի եղած ազգարարութիւններն,  
թէ՛ Եղեղեցւոյն մէջ ծանուցմամբ, թէ  
բակը կախուած ցուցակին ներքեւ և թէ  
ազգային լրագրաց միջոցաւ ընելով:

Ապրիլ 22 կիրակի օրն՝ ինքեղոյու-  
թեան բոլոր անդամոց Ընտրողական ժո-  
ղովոյ, ժամը ճիշտ մէկին քուէարկու-  
թիւնը սկստիք, որ տեւեց մինչ երեքը  
քառօրէ անցած, յորմէ անմիջապէս յե-  
տոյ յատուկ քննչաց ձեռամբ քուէհամա-  
րի գործողութեան ձեռնարկեցինք, որոյ  
արդեամբ թաղիս երեսփոխան ընտրուե-  
ցան հետեւեալ երեք անձնքը, բացար-  
ձակ առաւելութեամբ քուէից:

- |                            |      |
|----------------------------|------|
| 1. Ղազարոսեան Սահակ Էֆէնտի | 34   |
| 2. Թիւյսիւ զեան Սեպուհ     | » 33 |
| 3. Նորասունկեան Գարբիէլ    | » 32 |

Ահաւասիկ թիւյսիւ զեան Սեպուհ  
Էֆէնտի յանձնառութեան գիրքներտե-  
կայ կու գործեմք, սակայն Գարբիէլ  
Էֆէնտի Նորասունկեան որոյ հաճութիւնը  
յառաջ քան ընտրութիւն առնուած է,  
առժամանակեայ տէրութեան պաշտօնով  
մայրաքաղաքէս բացակայ կը գտնուի  
այժմ. նոյնպէս և Ղազարոսեան Սահակ

Էֆէնտի որ օգտախոսութեան պատճա-  
ռաւ Պրուսա դացած է, Ընտրողական  
ժողովոյս կողմէ ընտրութիւնը ծանուցա-  
նող նամակին դեռ այսօր՝ որ է 9 մայիս,  
հրաժարագրով պատասխանեց. հետեւա-  
բար հոգի կը լլայ յիշեալ Էֆէնտին տեղ-  
նոր ընտրութիւն կատարել:

Արդ՝ Պերապատիւ Սրբազան Հայր,  
տեղեկագրելով զայս, կը խնդրեմք որ  
պարտապատշաճը շնորհ ընել բարեհաճիք:

Ընտրողական ժողովոյ  
Նախագահ  
Յովնանես Վ. Փափագեան

Առննապետ Սահակեան  
Յ. Կրճիկեան Յովսէփ Զիլեան

9 Մայիս 1879

Ի թաղ. բարձրորդ արան ի  
Ս. Գեորգ Եղեղեցւոյ  
Սամաթիոյ

Յանձնառագիր ընտրելոյն

Արժանապատիւ Նախագահ  
Ընտրող. ժողովոյ Ս. Գեորգ Եղե-  
ղեցւոյ Սամ. թիւ

Ձեր արժանապատուութեան ապրիլ  
23 նամակի նամակն ընկալայ, որով կը  
ծանուցանէք ինձ թէ՛ ապրիլ 22 կիրակի

օրն Սամ. թիւ թաղէն երեսփոխան ընտ-  
րուած եմ բացարձակ առաւելութեամբ  
քուէից:

Արդարեւ՝ սոյն ընտրութեամբ թաղիդ  
երեսփոխանական Մեծ. ընտրողք իմ կա-  
րողութեան աւելի ինձ արժէք տալով,  
զիս այդ պիտի աղչ. բարձր և կարեոր  
պաշտօնի մը կոչելու պատիւն ըրած են.

ուստի և ես կը վերադառնամ իմ խորին շնորհակալիքս մատուցանելով հանդերձ, յայտ առնել իմ Մեծ. Ընտրողաց թէ պատրաստ եմ յօժարակամ ծառայել Ազգիս :

Ընդունեցէ՛ք, Արժանապատիւ Ս. Հայր, իմ խորին յարգանաց հաւատարիքը :

2 Մայիս 1879 Մնամ Խ. ծառայ Սամաթիա Սեպուհի Մ. Թիւսիսգեան

(Սոյն գրութեանց ընթերցումէն ետեւ.)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քաղ. ժողովը Սամաթիոյ թաղին կողմէ ընտրեալ երեսփոխանաց միայն երկուքին, այն է Թիւսիսգեան և Ղազարոսեան էֆէնտիներուն ընտրութեան օրինական հանգամանքներ ունենալը կը հաստատէ, որոց առաջինը կ'ընդունի պաշտօնն և երկրորդը՝ Ղազարոսեան էֆէնտի՝ կը հրաժարի թէ և գրաւոր հրաժարական մը չկայ մեր դիւանին վրայ : Իսկ երրորդը Գաբրիէլ էֆէնտի նորատունկեան՝ դեռ ևս օրինական հասակը չունենալուն՝ զուրկ կը գտնուի ընտրութեան իրաւունքէ : Արդ՝ կը հարցնեմ ժողովին թէ զտողութիւն ունի արդեօք այս ընտրութեանց վրայ, և եթէ զիտողութիւն ընող չկայ, պէտք է միայն քուէի դնեմ Թիւսիսգեան և Ղազարոսեան էֆէնտիներուն ընտրութիւնը :

ՄԷԼԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Քաղ. ժողովը նորատունկեան էֆէնտի տարիքն անբաւական կը գտնէ, սակայն լաւագոյն կը լինէր որ ընդ նմին յայտնէր թէ ուստի ստուգած է անոր տարիքն և եթէ այժմ քանի տարեկան հասակին մէջն է նա Շատ աղէկ կը լինի որ գիտնանք որոշակի թէ իրեն պէս արժանաւոր անձ մ'երբ կրնայ երեսփոխան ընտրուելու հասակը թեւեւ կոխել, շտան և չորս տարեկան է միթէ, և անոր համար անբաւական կը գտնուի հասակը : Թէ ոչ քսան և ինը տարեկան և վեց ամսու է ևս այս է պատճառ որ օրինական տարիքէն զուրկ կը գտնուի Այս երկուքին մէջ մեծ տարբերութիւն կայ, ուստի պէտք է ճշգրտել սոյն պարագան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վարչութիւնը կրնայ տալ ձեր խնդրած տեղեկութիւնները :

ԱԼԹՈՒՆ ՏԻՒՐՐԻ Ա. ԷՖ. — (Ի դիմաց Քաղ. ժողովոյ) Քաղ. ժողովն Իւսկիւտարի Ս. Խաչ եկեղեցւոյ Թաղ. խորհրդէն ստուգած է անոր տարիքը : Նորատունկեան Գաբրիէլ էֆէնտի 1852 թուականին մկրտուած է՝ Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ, ըստ արձանագրութեան, հետեւաբար քսան և եօթ տարեկան է այժմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քաղ. ժողովոյ քննութեան արդիւնքը կը յայտնէ որ նորատունկեան էֆէնտին քսան և եօթն տարեկան է, և չունի ընտրութեան օրինական հասակը : Պէտք է սպասենք ուրեմն դեռ ևս երեք տարի որ կարենանք օգուտ քաղել իւր ծպտայութենէն :

ՉԱՅՆԵՐ. — Այո՛, այո՛ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուստի ի բաց թողով անոր ընտրութիւնը՝ ժողովիդ վաւերացման պիտի ենթարկեմ Սամաթիոյ թաղի միւս երկու ընտրութիւններն, և ի վերջէ քուէի դնեմ նաև Ղազարոսեան էֆէնտի հրաժարականը :

ԲԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ղազարոսեան էֆէնտի արդէն Քաղ. ժողովոյ անգամ ըլլալով ստիպեալ է դալ ներկայ գտնուիլ ժողովոյ նիստերուն : Ինչո՞ւ ուրեմն կը մերժէ երեսփոխանական պաշտօնը : չեմ հասկնար :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ խնդիրը կատարուած ընտրութեանց օրինաւորութեան վրայ է, ուստի անոր վրայ պէտք է խօսիք, եթէ խօսք ունիք, իսկ հրաժարականի խնդրոյն վրայ՝ ի վերջէ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ասկէ՛ առաջ գարձեալ Ստեփան վաչայի ատենապետութեան օրով որոշուած էր որ ընտրելոց կողմէ յանձնառութեան գիր ներկայանայ ընտրական տեղեկագրերուն հետ, որպէս զի նոր ի նորոյ խօսքերու տեղի չարուի, սակայն կը տեսնեմ որ դարձեալ առջի վիճակի մէջ կսկսին մտնել

ընտրութիւններն և հրաժարմանց խնդիրներն դմեզ կը պաշարեն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գիտողութիւնս կը կրկնեմ, խնդիրն այժմ ընտրութեանց օրինաւորութեան վրայ է, իսկ հրաժարականի մասին եսքը կրնանք խօսիլ :

Ընտրութեանց մասին որ և է գիտողութիւն տեղի չունենալով Ատենապետ էֆէնտի քուէի դրաւ՝ Թիւսիսգեան և Ղազարոսեան էֆէնտիներու երեսփոխանական ընտրութիւնն, և ժողովը միաձայն անոր օրինաւորութիւնը հաստատելով ՎԱԻԵՐԱՅՈՒՅ, և հետեւապէս Ազգ. երեսփոխան հռչակեց :

Սեպուհի էֆ. Թիւսիսգեան Սահակ էֆ. Ղազարոսեան

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը մնայ այժմ Ղազարոսեան էֆէնտի հրաժարականի խնդիրը լուծել, թէ և հրաժարագիրը չունինք ի ձեռին :

ԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Քանի որ հրաժարագիր չկայ, ինչպէս ուրեմն պիտի խօսինք այս մասին :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կառաջարկեմ որ Գալաֆեան էֆէնտի հրաժարականին պէս այս ևս յանձնուի Սրբազան նախագահին, որպէս զի համողէ Ղազարոսեան էֆէնտին իւր հրաժարականն ևս առնելու :

ՄԷԼԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Քիչ մ'ալ պէտք է խնդրոյն գործնական կողմը մտածել, և ես այս նպատակաւ պայմանմը կառաջարկեմ եթէ Սրբազան նախագահը յաջողի հրաժարեալները համոզելու, շատ աղէկ, իսկ թէ ոչ՝ պէտք է արտօնութիւն ունենայ, առանց միւս անգամ վերադարձնելու հոս խնդիրը, որոց որ անկ է հրամայելու անմիջապէս որ նոր ընտրութեան ձեռնարկեն :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կը ձայնակցիմ :

ԻԹԻԻՃԵԱՆ Յ. ԷՖ. — Կը ձայնակցիմ ևս :

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Անցեալ օր Քաղ. ժողովոյ մէջ՝ Ղազարոսեան էֆէնտի հրաժարականին վրայ խօսք բացուեցաւ, և այս առթիւ յորդորներ եղան իրեն որ ընդունի պաշտօնը, սակայն նա՝ պատասխանեց թէ անկարելի է ընդունիլ և ինք ազաչեց ինձ որ ընդունուի իւր հրաժարականն, իսկ միւսին հետ, ինչպէ՞ս ըսի պահ մ'առաջ, դեռ ևս չեմ խօսած :

ՊԷՐՊԷՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Հրաժարականի խնդիրն լաճախ կը ներկայանայ ժողովոյս մէջ, ուստի կուզեմ յայտնել ինչ որ կը խորհիմ այս խնդրոյն վերայ : Երբ ազգային մը կը կոչուի ազգային պաշտօնի մը, հոս երկու բան կայ. պատիւ մը որ կը լինի ընտրելոյն և պարտաւորութիւն մի որ կատարելը կոչուի եթէ պատւոյն առջեւ յետս ընկրկի առ համեստութեան, պարտաւորութեան առջեւ չկարէ յետսնահանջել, բայց երբ նաև պարտուց կատարումն կը հրաժարի, կը նշանակէ թէ զայն կատարելու անկարելիութեան մէջ է : Ուստի ստիպել զինքն որ ընդունի այդ պաշտօն՝ կասկածի տակ դնել կը լինէր իւր ազգասիրութիւնն կամ անկեղծութիւնն : Եւ որովհետեւ այդպիսի աննըպատ կարծիք մը չենք ուզեր ունենալ ընտրելոյն վերայ, հարկ է ուրեմն ընդունիլ իւր հրաժարականն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պէրպէրեան էֆէնտին նորեկ լինելով մեր մէջ ընկան է որ մեզի չափ տեղեկութիւն չունենայ մեր կազմակերպութեան և գործոց ընթացքին վրայ . . . :

ՊԷՇԻՐԵԱՆ Ա. ԷՖ. — (Ընդմիջելով) Սակայն ճշմարտութիւն մ'է ըսածը :

ՊԷՐՊԷՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Այդ նորեկ բառն աւելորդ է և չեմ կարող իբր պատասխան ընդունիլ զայն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Շարունակելով) Մեր մէջ ընդհանրապէս յօժարամիտ են ամենքն ալ ազգին կողմէ իրենց յանձնուած պաշտօնները վարելու, սակայն երբեմն պատճառներ կուրենան հրաժարելու, և ժողովն չընդունելով

երբեմն անոնց հրաժարականը զիրենք կը հարկադրէ որ միջոցը գտնեն իրենց ժամանակէն փոքրիկ բաժին մ'ալ ազգին նուիրելու . . . .

Այս պահուստուն կնդրի բազմութեան մէջէն անձ մը կընդհատէ Ատենայեան էֆ. ի խօսքը, բարձրագոյն ձայն մ'արձակելով, եւ թուղթ մը կարկառելով զէզ ի ժողովը: Ատենայեան էֆէնտին լուսթիւն կը պատուիրէ, սակայն ազդողակը աւելի ուժգին կրկնուելով բարեկարգութիւնը կը վրդովի, եւ հուսկ ուրեմն Ատենայեան էֆէնտին հրամանաւ դուրս կը հանեն բարագոյնը այդ անձը, եւ հանգրատութիւնը կը տ'ընէ:

ԺՈՂՈՎԱԿԱՆՆԵՐ ՄԷՋԷՆ ԶԱՅՆԵՐ. — Բայց ի՞նչ կուզէ այս մարդը, խնդիրն հասկնայինք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Շարունակելով) Կան նաև այնպիսի անձինք ալ որ համեստարար կը կարծեն թէ ազգին ծառայելու ձեռնհաս չեն, ուստի կը դեղեկին, եւ շատ անգամ մեր ըստի դուք անոնց վարանման փերջ կըլտայ, շեւտեարար պաշտօնն ընդունելով կը վարեն: Այսպիսի պարագաներ կան անուստ կ'հրաժարականի խնդրոյն մէջ, եւ ժողովը իրոց վճակին համաձայն ստիպուած է շարժիլ այս մասին:

ԱՍԼԱՆՅԱՆ Ս. ՓԱՇԱ. — Միջանկեալ տեղեկութիւն մը հարկ կը դատ'մ տալ ժողովից մեկնելու համար աղանակին շարժառիթն, որ տեղի ունեցաւ պահ մ'առաջ: Այն անձն որ ազդողակ բարձաւ, բարագոյնն մը ձեռքը թուղթ մը գրկից ինձ բիշ առաջ, քստի մ'անձանց կող է ստորագրեալ. որ Մշեցի բանասիրեալ սարկաւազին ազատութեանը համար՝ Ազգ ժողովոյ ժըջամատութիւնը կը խնդրէն: Տեսնելով սակայն որ կանոնին հակառակ առարկութիւններն որ անձան թ էին չէին վաւերացիալ պաշտօնական մարմնոյ մը կողմէ, եւ ազդողակին ալ տուժարագրեալ չ'ը պատրարձական գիւսնատան կողմ, դարձեալ բարագոյնին ձեռքը փերագարձուցի ազգի սուրբին նոյն անձին, հրահանգ ուղղելով որ պ'տը եւ զած օրինական գործողութիւնը կատարել տայ,

առանց որոյ՝ եթէ գ'րը վար դրուեր, չի պիտի կարենար ժողովը նկատողութեան առնուլ զայն, եւ ի շարս անպէտ թղթոց պիտի դասեր: Բայց ես չուզեցի որ այնպ' սըլլար. ալ իրենց խնդրոյն կատարուեմք դիւրացընելու համար՝ ետ դարձուցի թուղթերը, որ կանոնին ընդունած ձեւով ներկայացնեն, որպէս զի իրենց խնդրը լուսի: Ահա այս է պատճառ որ այդ անձն ազգի բանասիրէ կը գոչէ թէ ինչու թուղթս չ'ընդունեցիք, զի շղիտեր թէ իւր թուղթը չ'ընդունողն ես չէի՝ այլ կանոնն էր:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Շնորհակալ եմ որ բացատրեցիք պատճառը, բայց ես անտեղեակ էի այդ պարագաներուն, եւ իմ պարտաւ որութիւնն էրս կատարելով զինքը դուրս հանել տուի, բարեկարգութիւնը խանդարեալն համար, Գառնայով աժմ մեր հրաժարականի խնդրոյն՝ կը յուսամ որ Պ'րոյ'րեան էֆէնտին տուած բացաւ բութեանցս վրայ ալ եւս շարժեր որ հրաժարականն ընդունուի:

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ ԷՖ. — Ես կարծիք մը չ'աւանդեցի միայն:

ԶԱՅՆԵՐ ԱՄԷՆՈՒՍ. — Քուէ', քուէ':

Եւ Ատենայեան էֆէնտին քուէի կը դնէ նորընտիր երեսփոխան Ազգարտեսան Սահակ էֆէնտին հրաժարականը, եւ ժողովը միաձայն կը ՄԵՐԺԷ զայն, որովհետք որ Սրբազան նախագահը փորձէ համոզել ընտրեալը պաշտօնն բողոքուելու, իսկ եթէ չ'աջողի թէ այս եւ թէ Գառնայեան էֆէնտին հրաժարականն ետ ստնել տալու բոս առաջարկութեան ՄԷՐԷՄ-ՆՈՒՄ Էֆէնտին ինքը ընտրութեանց հրահանգ յաւարկէ:

4.

Մարգիթ կանոնագրի ազգային ուղղակի տրոց

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քաղ. ժողովն ազգ. ուղղակի տրոց վրայ կանոնաց ծրագիր մը բերած է այս առիթով, որ ըստ օրինի պ'տի յղուի

համարակալութեան գիւսնին, եւ անոր տեղեկագիրը գալէ ետեւ՝ անցնի խնդրոց կարգը, ուստի համարակալութեան գիւսնին կը յղեմ զայն:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Անգամ Համարակալութեան գիւսնի) Եթէ Համարակալութեան գիւսնը փութայ իւր տեղեկագիրն հասցընել, չնորս կընէ՞ ժողովը յաջորդ նիստի օրակարգն անցնել խնդիրը: Եթէ ժողովը հաւանի՝ կը խոստանամ գիւսնին կողմէ նիստէն քսան եւ չորս ժամ առաջ տեղեկագիրը հասցնել ատենագրութեան հետ տպուած:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ստիպողութիւն կը խնդրէք ուրեմն:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Խնդիրն ստիպողակա՞ն է. առաջիկայ նիստին օրակարգն անցնելը կը ցանկամ:

ԱՍԼԱՆՅԱՆ Ս. ՓԱՇԱ. — Օրինական ծրագիր կամ խնդիր ներկայացած ատեն՝ ստիպողութիւն կրնայ խնդրուիլ, Վարչութեան կամ հեղինակին՝ եւ կամ ուրիշ երեսփոխանի մը կողմէ, որ կրնայ առաջարկեալ ծրագիրն ընդգրկել, Բայց ներկայ պարագային մէջ կը տեխնեմ որ Վարչութիւնը՝ թէ եւ հեղինակ ծրագրին՝ կը լռէ, եւ Համարակալութեան գիւսնը կը կանգնի ստիպողութեան պաշտպան, որ կը նշանակէ կամ կրնայ կարծեցունել թէ իւր խորհրդակցութեամբը շինուած է այդ ծրագիրը, մինչդեռ ինք ժողովին կողմէ պաշտօն ունի զայն քննելու, եւ իբր այն՝ պէտք է ըստ ամենայնի անմասն եւ անկախ գտնուի գործին մէջ, որպէս զի աշտութեան կասկածանքէն զերծ լինի իւր քննութիւնն, եւ ժողովը դժուարութիւն չկրէ զայն իրեն յանձնելու համար:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Իմ խօսքս սխալ մեկնութիւն մ'ընդունեց. իմ նպատակս էր փութացնել գիւսնին աշխատութիւնն եւ ըստ որում գիտէի թէ ելմտացոյցին ներդաշնակութեան նկատմամբ ինչ աստիճան կարեւորութիւն ունէր գործը, խոստացայ որ Համարակալութեան գիւսնը շուտափոյթ կատարէ իւր պաշտօնը:

Գիւսններ գտնուած են որ շատ անգամ ամիսներով խնդիրներն առած նստած են, իսկ հիմա ի յանցանս կը գրեն Համարակալութեան գիւսնին ջանասիրական միտումը, ուստի կը բողոքեմ մեր ծառայութիւնն այս կերպով մեկնուելուն դէմ:

ԱՍԼԱՆՅԱՆ Ս. ՓԱՇԱ. — Եղած յայտարարութիւնը Համարակալութեան գիւսնին պաշտօնը փութացնելու իմաստ չունէր այնքան որքան ստիպողութիւն մ'էր խնդրուածը: Ես եւս պատրաստ եմ հաստատուելու որ տրոց կանոնական ծրագիրն արժանի է ստիպողութիւն ընդունելու, բայց Համարակալութեան գիւսնին չ'պատկանիր որ եւէ ձեւով զայն խնդրել, այլ Վարչութեան, եւ այս էր իմ կանոնագրական գիտողութեանս առարկան:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Սակայն ես բնաւ ստիպողութիւն բառը չ'արտասանեցի, Ստենայեան էֆէնտին ըսաւ զայն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Փափաղեա՞ն էֆէնտին, խօսք չունիք այլ եւս:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Պէտք է որ փաշան ետ առնու իւր խօսքը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Փաշային գիտողութիւնը կանոնագրական էր:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Բնաւ կանոնագրական չէր:

ՄԷՐԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Խօսք կուղեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խիստ պարզ էր փաշային գիտողութիւնն. եւ գիւրին՝ անոր ուղին ըմբռնել:

Քաղ. ժողովը հեղինակն ըլլալով ծրագրին լուսթիւն կը պահէր, եւ Համարակալութեան գիւսնը փոյթ չը ցուցնէր երազելու համար խնդրոյն լուծումը, հետեւապէս Փաշային գիտողութիւնը տեսակ մը հրաւէր էր առ Քաղ. ժողովն որ ինք յայտարարէ իւր բերած կանոնագրին ստիպողութիւնը, եւ չթողու զայդ

Համարակալութեան զիւանին , որ չէր կրնար ըստ օրինի ստիպողութիւն ընծայել անոր : Զարժեր ուրեմն աւելի խօսիլ այս միջադէպին վերայ , ուստի կը դռցեմ զայն :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Խօսք կուղեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Զեմ կարող ձեզ խօսք տալ :

ԱԼԹՈՒՆ ՏԻՒՐՐԻ Ա. ԷՖ. — ( Ի զիմաց Քաղ. ժողովոյ ) Քաղ. ժողովոյ բերած ծրագիրը Պիւտճէի յարակից էր , եւ նոյն խնդիրն նիստին մէջ յանուն Աղղ. ժողովոյ յանձնարարուած էր իրեն զայն փութացնել : Աղղ. ժողովն արդէն պիւտճէն քուէարկելու վրայ գանուելով բացատրութեան չէր կարօտեր թէ որքան ստիպողութիւն կրնար ունենալ նաեւ տրոց խնդիրն , ուստի Քաղ. ժողովը չէր կարծեր որ զայն հարկ լինի հոս կրկնել : Իսկ եթէ Համարակալութեան զիւանը զայն յիշեց , Քաղ. ժողովը շնորհակալ է իրեն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Միջադէպը վերջացած է , իսկ խնդրոյն գալով Համարակալութեան զիւանը կը խոստանայ յառաջիկայ նիստէն ըսան եւ չորս ժամ առաջ հասցնել իւր քննութեան տեղեկագիրը , միթէ Ատենադպիր էֆէնտին եւս կը խոստանայ զայն անցնել այս նիստի ատենադրութեան մէջ :

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Եթէ զիւանին տեղեկագիրը կարճաճօտ լինի , եւ ատենադրութեան տպագրութիւնը չաւարտած հասնի ձեռքս , կրնամ անցնել ատենադրութեան մէջ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Համարակալութեան զիւանը չի պիտի կրնայ յառաջիկայ նիստին իւր տեղեկագիրը բերել :

ՄԻՐԵՆԻՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Եթէ քիչ մ'առաջ խօսք տուած լինէիք ինձ , կարծեմ այս դժուարութեանց տեղի չի պիտի մնար : Ես ի մօտոյ տեղեկութիւն ունիմ խնդրոյն , եւ կըրնամ յայտնել ձեզ իրողութիւնը : Քաղ. ժողովն

այս ծրագիրը պատրաստած ատեն՝ նկատելով որ Աղղ. ժողովը Համարակալութեան զիւանին պիտի յղէ զայն , եւ զիտնալով որ եթէ զիւանը չատ մանրամասն դիտողութիւններ յարուցանէ , բնապէս ժողովին վիճարանութեան բովէն ուշ դուրս կելնէ ծրագիրն , որ մեծ կարեւորութիւն ունի իրեն համար՝ պիւտճէին դործադրութեան մէջ , լաւագոյն դատեր է Համարակալութեան զիւանին կարծիքները շօշափել , եւ այս նպատակաւ բանակցեր է փափաղեան էֆէնտին հետ : Այս տեղեկութիւնը տալէ ետեւ՝ պէտք է յարեմ նաեւ թէ պատրաստուած ծրագիրը կատարելապէս համաձայն չէ փափաղեան էֆէնտինի կարծեաց . բայց ըստ որում դիտէ նա՝ թէ մեծ կարեւորութիւն ունի տրոց խնդիրն , որ ելմտացոյցի ողին է , խօստացաւ զայն մինչեւ յառաջիկայ նիստ՝ վերադարձնել առ Աղղ. ժողովն : Իսկ Ատեփան փաշայի դիտողութեան նպատակն , ինչպէս ըսիք Ատենապետ էֆէնտին , Քաղ. ժողովոյ զրդիւ մը տալ եւ գործն իւր օրինական ճամբուն մէջ մտցնել էր միայն : Ուստի խնդիրը վերջացնելու համար կ'առաջարկեմ որոշել որ եթէ Համարակալութեան զիւանը ժամանակին կարենայ աւանդել իր տեղեկագիրն եւ եթէ Ատենադպիր էֆէնտին կարենայ զայն այսօրեայ նիստի ատենադրութեան հետ ի լոյս հանել , տրոց խնդիրը օրակարգն անցնի յառաջիկայ նիստին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն վերջացած է խնդիրն , եւ երբ Համարակալութեան զիւանը յուղարկէ իւր տեղեկագիրը ժամանակին , պիտի անցնի խնդիրն յառաջիկայ նիստի օրակարգը :

Հարցումն ինն երեսփոխանաց Հայաստանի վերաբերեալ ինչ ինչ խնդրոց վրայ .

Երեսփոխանաց ոմանց կողմէ՝ ուղղեալ յեւտադայ հարցումը կարդացուեցաւ .

Վ.ս.մ. Ատենապետ փաշա Աղղային ժողովոյ

Ստորագրեալ Երեսփոխանքս՝ ներկայ հարցապնդմամբ կուղենք դիտնալ թէ Ա. փոխանակ Հայաստանի Գիւրտիւստան բառին գործածութեան ,

Բ. Ուլինոյ խնդրոյն արդի ցաւալի վիճակին , ե

Գ. Հայաստանի զանազան դաւառներն Բուսիլիի գաղթականներ զրկուելուն նկատմամբ ի՞նչ ըրած է Սրբազան Պատրիարքը :

Ուստի սոյն խնդրոց պատասխանն այժմ ստիպողաբար խնդրելով , կառաջարկենք նաեւ որ խորհրդարանական Յանձնախումբը յառաջիկայ նիստերէն միոյն մէջ բարեհաճի իւր համարատուութիւնն ալ ներկայել յԱղղ. ժողովարանի :

- Մ. Գափամաճեան
- Սիմօն Հ. Ֆէլիկեան
- Տիգրան Տ. Ներսիսեան
- Սեպուհ Թիւրախեան
- Գեորգ Վարդանեան
- Ք. Ղազարոսեան
- Մ. Արծրունի
- Ղ. Հովոսեան
- Տ. Գ. Սիւնացեան

1879 Յունիս 22

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովը հարցման նիւթոց տեղեկացաւ , սակայն կուզէ այս հարցման նկատառումը թէ ոչ , պէտք է զայս որոշել նախապէս , եւ այս կէտը հասկնալու համար քուէի պիտի դնեմ խնդիրը : Գիտողութիւն ունեցող կայ արդեօք :

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ . — Աղղային ժողովոյ մէջ երկու տեսակ հարցում տեղի կըրնայ ունենայ . մին պարզ հարցում (գաղղիերէն՝ քսարիօն) , որ խնդրոյ մը կամ եղելութեան մը վրայ տեղեկութիւն առնելու , կամ ճշմարտութիւնն երեւան հանելու համար տեղի կուենայ , եւ պարզ պատասխան մ'ընդունելով կը վերջանայ իրեւ միջադէպ . իսկ միւր

հարցապնդում (գաղ. երեւոքիլասիօն) որ իշխանութեան մէկ արարքին կամ խնդրոյ մը վրայ տեսակ մը համարաութիւն է քննադատական ձեւով , եւ ընդհանրապէս վիճարանութեան տեղի կուտայ եւ վերջանալու համար քուէի մը կը կարօտի պատճառաբանեալ օրակարգի ձեւով : Երբ հարցում մ'ուղղուի Վարչութեան , կրնայ անոր պատասխան տալ թէ « չկրնար անմիջապէս պատասխանել » եւ ժողովը համոզուելով որոշեալ պայմանաժամի մը կը վերապահէ պատասխանը . կըրնայ նաեւ բոլորովին մերժել հարցումն եւ հարցապնդում պահանջել , որպէս զի պատասխանը տալէն ետքը՝ ժողովին կողմէն վստահութեան քուէ պահանջելու իրաւունք ունենայ : Իսկ հարցապնդման գալով , ըստ որում սա քննադատական ձեւ ունի եւ համարաութեան ձգտում , Վարչութիւնը չկրնար եւ չ'ուզեր երբեք մերժել զայն , զի պատասխանատուութենէ խուսարել կ'ենթադրէ . ուստի աւելորդ է ժողովին դիմել եւ հարցունել թէ կ'ուզէ իւրացնել հարցապնդումը . ժողովն այս պարագային մէջ ինչպէս նաեւ պարզ հարցման առթիւ ուղղակի միջամտելու իրաւունք չունի . ժողովին միմիայն վիճարանութեան բացումն եւ օրը կը հարցուի եւ ան ալ հարցապնդեալ պաշտօնէին կարծիքը լսուելէն ետքը . այս է կանոնը :

Երեսփոխանաց ոմանց խնդրոյն վրայ հարցումը կրկին կը կարդացուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երեք կէտերու վրայ է հարցումը եւ ուղղուած է առ Սրբազան Պատրիարքն : Իսկ երբ հարցի թէ ժողովը կուզէ զայն նկատողութեան առնուլ , ուրիշ բան ըսել չուզեցի , եթէ ոչ՝ հասկցնել թէ ժողովը նախապէս մը յայտնէ՝ թէ կուզէ հարցումը լսել թէ ոչ :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Երեք խնդիրներու վրայ եղած հարցումէն զատ՝ նաեւ առաջարկուած է որ Խորհրդարանական Յանձնախումբն իւր համարատուութիւնը ներկայէ յառաջիկայ նիստին : Հարկ է սակայն յայտա-

բարեւ որ այդ առաջարկն՝ անվստահութիւն չենթադրեր երբէք Յանձնախումբին նկատմամբ, այլ ըստ որում անոր կազմութեան ատեն որոշուած էր որ պարբերաբար իւր գործոց համարը տայ Ազգ. ժողովին, այս նկատմամբ առաջարկեցինք որ իւր առաջին համարատուութիւնը կատարէ: Իսկ հարցումն ստորագրելէ ետեւ՝ լսեցինք որ Յանձնախումբին ինքն իսկ որոշեր է ներկայել իւր գործոց պարբերական համարը, որու համար կ'իտութեանք մեր շնորհակալութիւնները յայտնել:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Մեր հարցումները գլխաւորաբար երեք կէտերու վրայ են, որոց պատասխանը կուզենք անպատճառ իսկ Խորհրդարանական Յանձնախումբին համարատուութեան համար մասնաւոր պահանջում մը չունինք, եւ հաւաստի եմք որ զայն պիտի ներկայացնէ: Մենք կարողացինք պաշտօնական հրատարակութեանց մէջ թէ Հայաստանի բուն անունը փոխեր եւ Քիւրտիստան կոչեր են զայն, եւ թէ Սրբազան Պատրիարքը բողոք բարձր է այս անունափոխութեան համար: Կուզենք արդ զիտնալ թէ ինչպէս եւ որո՞ւ բողոքեր է, ինչ բանակցութիւնք տեղի ունեցեր են այս մասին, եւ թէ ինչ է եղեր արդիւնքը: Մենք կը լսենք որ Աւրիոյ խնդիրն, որ ամենուս սրտին մեծ ցաւ պատճառած է, զանազան նոր դարձուածներ կառնու, եւ կուզենք զիտնալ պաշտօնապէս թէ ինչ վիճակի մէջ է այժմ: Մենք լսեցինք որ Բուսթիլի Թուրք գաղթականներով Հայաստանը լեցընելու ելեր են. ասոր դէմ ինչ միջոցներ զործ դրուած են, այս մասին ալ ստոյգ տեղեկութիւններ կուզենք: Մէկ կողմէ Հայաստանի անունը փոփոխել, միւս կողմէ գաղթականներ տանիլ լեցնել հոն, Աւրիոյ խնդիրը լուծելու տեղ կ'նձուտտել, այս ամէնը նշանակութեան արժանի են. ուստի կ'ուզենք եւ կը պնդենք որ անպատճառ տեղեկութիւն ստուի մեզ: Մենք Խորհրդարանական Յանձնախումբին վրայ ըստ ամենայնի վստահութիւն ունինք, ինչպէս ըսաւ Պաշտօնակիրս՝ Քափամաճեան էֆէնտի, բայց այս տեղեկութիւնները պէտք է տրուին մեզ անպատճառ եւ ան

միջապէս, եւ մինչեւ իսկ կըսեմ թէ հարկ է յառաջիկայ նիստն՝ առանց մինչեւ 15 օր յետաձգելու՝ գումարել 8 օրէն եւ այս խնդիրներուն վրայ բացատրութիւն լսել:

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. (Անդամ Խորհրդարանական Յանձնախումբի). — Այդ հարցումը կարգացուելէ ետեւ՝ կսպասէի որ յայտնէր զիւանը թէ ո՞վ պարտաւոր է պատասխանել, Սրբազան Պատրիարքը թէ Խորհրդարանական Յանձնախումբը, որպէս զի եթէ Յանձնախումբին վերադրուէր պատասխանը՝ յայտնէի անոր կարծիքն այս մասին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Ընդմիջելով) Հարցումը զիւանինը չէր, որ յայտնէր թէ ուրկէ կսպասէ պատասխանը, այլ երեսփոխանաց ումանց կողմէ ուղղեալ էր, եւ ժողովին կը մը նայ որոշել թէ կ'ուրացնէ զայն թէ ոչ:

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — (Շարունակելով) Յանձնախումբը պիտի կանխէր անմիջապէս իւր կարծիքը յայտնելու եթէ շփոթութեան մէջ չիյնար խնդիրը: Բացատրեմ այժմ խնդրոյն վիճակը: Հարցման հեղինակները Սրբազան Պատրիարքէն պատասխան կը խնդրեն. եւ կրնան ստանալ զայն ու Սրբազանութենէն իսկ Խորհրդարանական Յանձնախումբը կը փափաքի որ ժողովը հաճի յառաջիկայ նիստը դըռնփակ կազմել, որպէս զի իւր պարբերական համարատուութեան սկզբնաւորութիւնն ընէ, եւ կարելի եղած բացատրութիւններն տայ:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Մէրեւմ-Գուլի էֆէնտի կը սխալի. երբ կը կարծէ թէ հարցման հեղինակներն Սրբազան Պատրիարքէն կը սպասեն իրենց պատասխանը, այնպէս չէ, այլ Յանձնախումբէն կուզեն տեղեկանալ թէ հարցման նիւթ եղող խնդրոց մասին Սրբազան Պատրիարքը ինչ տնօրէնութիւններ եւ միջոցներ զործ դրած է:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ես այդպէս չեմ ըմբռնած խնդիրը, հարմանց պատասխանը Ս. Պատրիարքէն կ'ըսպասեմ եւ այս մտօք ստորագրած եմ հարցումը:

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Իրաւունք ունի Քրիստոստուր էֆէնտին:

ՔԱՐԱՔԱՇԵԱՆ Ն. ԷՖ. — Աւելի աղէկ կը լինէր որ նախ իրենց մէջ համաձայնէին, եւ այնուհետեւ ուղղէին հարցումը: Ասկէ զատ հարցման առաջին կէտն ալ, որ է Հայաստանի՝ Քիւրտիստան անունանումը, բացայայտ չէ, եւ թէ այդ բառն որո՞ւ բերնով եւ թէ ո՞ւր գործածուած է, պէտք էր որոշակի յայտնուած լինէր:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կարծեմ թէ տեղի չ'մնար խնդիրն այսքան ճապարհելու երբ ի միտ ածենք Խորհրդարանական Յանձնախումբին պաշտօնն եւ այն նախորոշ պայմանն, որ դրուած է անոր համարատուութեան մասին: Յանձնախումբին պարտաւորութիւն վերադրուած է արդէն իւր գործոց համարը պարբերաբար ներկայել Ազգ. ժողովոյ, եւ քանի չաբաթ է ի վեր կը պատրաստուէր նա ինքնաբեր իւր առաջին համարատուութիւնն ընելու, միայն սա կը մտածէր թէ ինք առաջարկէ համարատուութիւնն, թէ ոչ Ազգ. ժողովն զգայ այդ հարկը եւ պահանջէ: Սյդ հարկն հիմա զգալի կը լինի եւ նոյն իսկ այդ հարցումներն որ ուղղուեցան, ոչ թէ առանձինն Սրբազան Պատրիարք Հօր, կամ Վարչութեան, եւ կամ Խորհրդարանական Յանձնախումբին կը պատկանին, այլ երեքին միանգամայն: Յանձնախումբը Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ եւ գործակցութեամբ կը կատարէ իւր պաշտօնն եւ կը բանակցի ստէպ Վարչութեան հետ, եւ պատրաստ է իւր համարը տալ Ձեզ դոնփակ նիստի մէջ, ինչպէս Մէրեւմ-Գուլի էֆէնտին ի զիմաց Յանձնախումբին առաջարկեց, եւ այն ատեն այդ հարցումներն ալ իրենց պատասխաններն կ'ընդունին, ուստի կ'առաջարկեմ որ քուէի դնէք թէ ժողովը կուզէ յառաջիկայ նիստը դոնփակ կազմել, որոշելով գումարման օրը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը տեսնէք այժմ որ դարձեալ խնդիրն եկաւ յանդեցաւ այն կէտին թէ կուզէ ժողովն իւրացնել հարցումը: Այս մասին ժողովին կամքն ստանալէ ետեւ՝ Խոր-

հրդարանական Յանձնախումբին առաջարկը մէջ պիտի բերէի եւ ժողովին որոշումը խնդրէի թէ կուզէ դոնփակ նիստով լսել անոր պարբերական համարատուութիւնը: Հարցման հեղինակներն կը յայտարարեն թէ անվստահութիւն չունին Յանձնախումբին վրայ, այլ եւ եթ պատասխանը կուզեն իրենց հարցումներուն, իսկ թէ որո՞ւ կուզեն հարցումն եւ ուստի կը խնդրեն պատասխանն, այս կէտն ալ պարզուելով հասկըցուեցաւ որ թէ Ս. Պատրիարքէն եւ թէ Խորհրդարանական Յանձնախումբէն միանգամայն պատասխան կուզեն: Արդ ժողովը պէտք է իւր քուէով որոշէ այժմ թէ կուզէ այս հարցումը լսել:

Հետեւապէս ատենապետ էֆէնտի քուէի դնելով խնդիրը՝ ժողովը միաձայն ԸՆԴՈՒՆԵՑ ինն երեսփոխանաց կողմէ ներկայացեալ հարցապնդումը լսել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդրոյն առաջին կէտըն որոշուեցաւ, եւ մնաց միայն երկրորդն այն է՝ թէ կուզէ ժողովը Խորհրդարանական Յանձնախումբին համարատուութիւնը լսել դոնփակ կազմելով իւր յառաջիկայ նիստը:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Մեր յառաջիկայ սովորական նիստին համար արդէն շատ գործեր ունինք, մանաւանդ որ այսօր սա ժամուս՝ դեռ եւս օրակարգին անգամ չենք հասած, ուստի ինչպէս առաջարկեցի, պէտք է ութ օրէն արտաքոյ կարգի դոնփակ նիստ մը կազմենք, եւ զայն նուիրենք այս խնդրոյն, որպէս զի միւս շաբթուան սովորական նիստին մէջ կարենամք օրակարգի խնդիրներովն զբաղիլ:

ԻԽԹԻՆՃԵԱՆ Կ. ԷՖ. — Խորհրդարանական Յանձնախումբին յայտարարութիւնները գոհութեամբ լսեցինք. իւր պաշտօնը կարեւոր է եւ մեծ եւ իբր այն՝ իւր գործոց համարատուութիւնը հետաքրքրութեան արժանի, զոր կը փափաքինք լսել, ինչպէս նաեւ այսօրուան հարցմանց պատասխանները: Բայց այս երէք հարցումները կը տարբերին իրարմէ. երկրորդն եւ երրորդն այնպիսի խնդրոց կը վերաբերին,

որ պաշտօնական բանակցութեանց նիւթ կըն-  
ծային եւ ասոնց վրայ թերեւս ընդարձակ տե-  
ղեկութիւններ կան ժողովին հաղորդելի, ուստի  
չարաթ մ'ետքը կընայ պատասխան տրուել ա-  
նոնց : Իսկ հարցման առաջին կէտն, այն է  
Հայաստանի Քիւրտիստան անուանուած բողո-  
քի խնդիր մ'է պարզապէս, եւ կարելի է առ  
ժամայն պատասխանել թէ այս մասին պէտք  
եղած բողոքն եղած է թէ ոչ : Ամէն Հայ  
դառն վիշտ մը զգացած է տեսնելով որ իւր  
հայրենի աշխարհը կը զրկեն իւր անուանէն, եւ  
բարբարոս քրթաց անուան կը վերընծայեն,  
անհեթեթ անուանակոչութեամբ մը : Եթէ Վարչ-  
ութիւնն այս պարագային մէջ անփոյթ զըտ-  
նուած է, մեծ պատասխանատուութեան ներ-  
քեւ կը գտնուի, եւ պէտք է կամ ինք կամ  
Խորհրդարանական Յանձնախումբը ծանուցա-  
նէ անմիջապէս թէ ինչ ըրած են այս մասին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Յանձնախումբն իւր  
համարատուութիւնը կատարելու համար յա-  
ռաաջիկայ նիստը դճնիակ կազմել կառա-  
ջարկէ : Քրիստոստուր էֆէնտի կուզէ որ ա-  
սոր համար յատուկ նիստ մը տեղի ունենայ  
յառաջիկայ շաբթուն, իսկ Եւթիւճեան էֆէն-  
տի հարցման մէկ կէտին վրայ անմիջական  
պատասխան կը խնդրէ : Նորէն խնդիրը չճա-  
պազելու համար կը հարցնեմ Յանձնախումբին  
թէ իւր բերելիք տեղեկագիրը երկար եւ կա-  
րծա է արդեօք մասնաւոր նիստի, եւ թէ  
կընայ հարցման առաջին կէտին վրայ առժա-  
մայն պատասխան տալ :

ՕՏԵԱՆ Գ. ԷՖ. — Մեր երեսփոխան ըն-  
կերներէն Իւթիւճեան էֆէնտին հարցման եր-  
կու կէտերուն համար գիտողութիւն ըրաւ թէ  
կընան շաբաթ մ'ետեւ ընդունել իրենց պա-  
տասխանը, սակայն առաջին կէտին համար  
անմիջական պատասխան պահանջեց : Կուզամ  
ես եւս ձայնակցիլ իրեն : Բնական է որ ե-  
րեսփոխան էֆէնտիներն եւ այս երեսփոխա-  
նութեան տաճարէն դուրս գանուող ամեն  
ազգայինք յուզուած լինին, տեսնելով որ ի-  
րենց ազգին ու երկրին անունը փոխեր եւ զայն  
Քիւրտիստան անուաներ են, իրենց հարստա-

հարչաց անունով : Որքան բնական է այս յուզ-  
մունքը, նոյնքան իրաւացի է որ անմիջական  
պատասխան մը տրուի այս մասին :  
Ես չեմ կարծեր որ Անգղիական կառա-  
վարութիւնը Հայաստան անուանին տեղ Քիւր-  
տիստան բառը դործածած լինի, եւ ինչ տե-  
սակ քաղաքականութեան համար պիտի ընէ  
զայս : Անկարելի է ազգի կամ երկրի մ'անու-  
նը փոխել, տէրութիւն մ' որքան ալ հզօր լի-  
սել, Անգղիական կառավարութիւնն ինչ պատ-  
ճառ կընայ ունեցած ըլլալ որ այսպիսի անկարելի  
բանի մը ձեռնարկէ : Եթէ ստուգիւ կայ այս տե-  
սակ իրողութիւն մը, շատ շատ աշխարհա-  
գրութեան անհմուտ երկրորդական պաշտօնա-  
կալի մը սխալն ըլլալու է եւ այս տեսակ պա-  
րագայի մէջ ազգն իրաւունք կընայ ունենալ  
գիտողութիւն ընելու : Յանձնախումբը ինչ տե-  
ղեկութիւն ունի այս մասին :

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Կը տեսնեմ որ  
ժողովն անհամբեր տեղեկութիւն կուզէ այս  
մասին, ուստի կը փութամ յայտարարել որ ճշ-  
մարիտ է զրոյցն եւ Հայաստանի անուան վրայ  
այդ փոփոխութիւնն կատարուած է :

ԷՍԱԵԱՆ Մ. ԷՖ. — Անգղիոյ պաշտօնական  
Լընտըն կազէթ անուն թերթին վերջին թիւը  
հասաւ ձեռքս, ուր տեսայ որ Հայաստանի Քիւր-  
տիսթան անունը տրուած էր :

ՕՏԵԱՆ Գ. ԷՖ. — Որովհետեւ Յանձնա-  
խումբն իրեն ստուգութիւնը կը հաստատէ,  
հարկ կըլլայ մեզ զայս եւս գիտնալ թէ այս  
պարագային մէջ ինչ ըրած է Վարչութիւնը,  
կը հաճի արդեօք Յանձնախումբն այս մասին  
եւս տեղեկութիւն տալ ժողովին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Հարցմանց առաջին  
կէտն ամենուն ուշադրութիւնը կը գրաւէ :  
Եւ ամեն ոք կը բաղձայ անմիջական եւ կա-  
տարեալ պատասխան մ'ընդունիլ : Յանձնա-  
խումբին կողմէ Մէրեէմ-Գուլի էֆէնտին հաս-  
տատեց արդէն իրողութեան ստուգութիւնը,

փաբելի էր նաեւ գիտնալ թէ Վարչութեան  
կողմէ բողոքուած է ասոր դէմ :

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Յանձնախումբ-  
ը կը փափաքէր որ իւր պաշտօնին վերաբեր-  
եալ ամեն տեղեկութիւն յառաջիկայ դճնիակ  
նիստին մէջ եւ մանրամասն համարատու-  
թեամբ կատարէր, սակայն Հայաստանի անուան  
փոփոխումը, որ արդարեւ տարօրինակ իրո-  
ղութիւն մ'է, սիրտերն ի խոր խոցելով ամէն  
ոք կուզէ գիտնալ թէ ինչ տնօրէնութիւն եւ  
ղած է այս մասին : Անգղիոյ կառավարութիւ-  
նը Հայաստանի վրայ ընդհանուր հիւպատոս  
մը կը կարգէ, սակայն Քիւրտիսթանի հիւպա-  
տոս կանուանէ զայն : Ի սկզբան ամենուն ան-  
հաւատալի կը թուի այս անուանակոչումն, ինչ  
պէս Օտեան էֆէնտին եւս չէր ուզէր հաւատալ,  
սակայն ի վերջէ Անգղիոյ պաշտօնական լրագի-  
րըն կը հասնի, եւ կը հաստատէ ինչ որ անհա-  
ւատալի կը կարծուէր, այսինքն թէ Հայաստա-  
նը Քիւրտիսթան կոչուեր է ընդհանուր հիւ-  
պատոսին անուանմանն առթիւ, բայց թէ ո-  
րու բերնով կամ գրչով կատարուած է այս,  
Անգղիոյ առաջին նախարարին կամ երկրոր-  
դական պաշտօնէի մը, զայս չգիտեր Յանձ-  
նախումբն, այլ գիտէ միայն որ Ամեն Սրբա-  
զան Պատրիարքն այս հրատարակութեան վրայ  
անմիջապէս պէտք եղած գիտողութիւններն  
ըրաւ ազգուապէս, որու որ անկ էր : Կը յու-  
սամ որ այս բացատրութիւնը ժողովը հերիք  
կը համարի առ ժամս եւ զո՞ կը լինի իւր ստա-  
ցած տեղեկութեամբը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ահաւասիկ Յանձնա-  
խումբն այս առաջին կէտին վրայ խնդրուած  
բացատրութիւնը տուաւ, կը հարցնեմ ժողովին  
զո՞ն է թէ ոչ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՖ. — Շնորհակալ ենք  
որ Յանձնախումբին կողմէ խնդրուած բա-  
ցատրութիւններն տրուեցան մեզ : սակայն,  
ինչպէս ըսի, պահ մ'առաջ, պէտք է որ բառ  
առ բառ հաղորդուի մեզ եղած բողոքը, եւ  
ես այն ատեն ըսելիքներ ունիմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Յանձնախումբն առ

ժամս այսքան տեղեկութիւն կրցաւ տալ, իսկ  
աւելի ընդարձակ դճնիակ նստին վերապա-  
հեցի Գո՞ն էք թէ ոչ այս տեղեկութեանն, զայդ  
ըտէք :

ԻԽԹԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Իրրեւ հարցման  
հեղինակ կը յայտարարեմ թէ զո՞ն եմ :

ԵՆՄԷՆԻՃԵԱՆ Յ. ԷՖ. — Կը ձայնակցիմ :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ես ալ համա-  
միտեմ Քրիստոստուր էֆէնտի, եւ կը կարծեմ  
թէ պէտք է այս խնդրոյն վերաբերեալ թըղ-  
թակցութիւնները ներկայանան ժողովին : Բայց  
չկարծուի թէ Յանձնախումբին վրայ անվստահ  
ենք եւ ասոր համար աչօք կուզենք տեսնել  
թղթակցութիւնները, ընդհակառակն, մեր վըս-  
տահութիւնը անուան է, բայց ըստ որում այս  
խնդիրը փափուկ է եւ ծանր, կուզենք որ այս  
գրութիւնները ներկայանան, եւ այս եղա-  
նակաւ նաեւ ժողովին հաւանութեան եւ վա-  
ւերացման գրօշմն ընդունի եղած բողոքն :  
Իսկ դճնիակ նիստի առաջարկութեան գալով,  
Ատենապետ էֆէնտի պահ մ' առաջ կը հարցնէր  
Յանձնախումբին թէ իւր համարը երկար է, թող  
ներէ ինձ գիւանը յայտնել թէ ես այդպիսի  
պայման մը չեմ կընար ընդունիլ այսպիսի կեն-  
սական խնդրոց համարատուութեան համար,  
վասն զի կընայ ըլլալ որ վիճաբանութիւններ  
տեղի ունենան այս առթիւ եւ ամբողջ նիստ  
մը գրաւեն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Աւելորդ կը համա-  
րիմ այս գիտողութեան պատասխանել, վասն  
զի մեր բուն խնդիրն այդ կէտին վրայ չէ այ-  
ժամ : Հարցմանց առաջին կէտին պատասխան  
մը տուաւ Յանձնախումբը, եւ այս պատաս-  
խանը հոն կը յանգէր որ Հայաստանի անուան  
փոփոխութեան համար Սրբազան Պատրիարքը  
պէտք եղած բողոքն ըրեր է : Իսկ թէ ինչ կեր-  
պով եւ ինչ բառերով այս մասին պէտք ե-  
ղած բացատրութիւնն Յանձնախումբն ուրիշ  
ատենի վերապահեց : Ասոր դէմ ըսելիք մ'ու-  
նիք զայդ պէտքէ յայտնէք :

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Խօսք կուզեմ ՁԱՅՆԵՐ. — Քուէ, քուէ :

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Խորհրդարանական Յանձնախումբին նկատմամբ խնդիր կը յուզէք, եւ երբ խօսիլ կուզէ նա, չէք ուզեր լսել. այս անկարելի է: Ես կը ցաւիմ որ հարցման հեղինակներէն՝ Քրիստոստուր եւ Քափամանեան էֆէնտինները մէկ կողմէ վստահութիւն կը յայտնեն Յանձնախումբին վրայ, եւ միւս կողմէ անոր պատասխանին վրայ երկրայելով թերեւս թղթակցութիւնները կը պահանջեն, երբ նա արդէն տուաւ ինչ տեղեկութիւն որ կըրնար տալ այս ժամուս, եւ դժնիակ նիստ խնդրեց աւելին քան զայն հաղորդելու համար: Յանձնախումբը պատրաստ է համարատուութեան. գումարեցէք ուրեմն այդ նիստն երբ որ կուզէք, եւ ամեն ինչ լսելով դատեցէք իրերը, սակայն անհամբերութեամբ՝ սխալ գիրքն մը մէջ մի թողուք զմեզ, այժմէն պահանջելով ամեն գիր եւ մանրամասնութիւն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Հարցումն երկու մասի բաժնուեցաւ ինքնին, մին Հայաստանի անուան փոփոխութեան խնդիրն, որ անմիջական պատասխան մ'ընդունեց, իսկ միւսն Աւելնոյ եւ Բուսէլիի Թուրք գաղթականաց ի Հայաստան փոխադրութեան խնդիրն, որ բարենորոգմանց Յանձնախումբին համարատուութեամբ պիտի ընդունի իւր պատասխանն դժնիակ նիստի մէջ, ինչպէս Յանձնախումբն առաջարկեց: Առաջին մասին վրայ Յանձնախումբին պատասխանն լսելէ ետեւ՝ եղան ոմանք հարցմանն հեղինակներէն որ նոյն իսկ Սրբազան Պատրիարք Հօր կողմէ ուղղուած բողոքադիրը տեսնել ուզեցին, թէ եւ Յանձնախումբը մանրամասնութիւնը դժնիակ նիստի կը վերապահէր, եւ այն ատեն դիւանը հարցուց ժողովին թէ դո՞ւ է Յանձնախումբին պատասխանէն: Այս կէտին վրայ բաւական խընդիր յուզուեցաւ եւ ժամէ արդ որ ժողովն իւր քուէովն որոշէ այս կէտը:

Եւ Ատենապետ էֆէնտին քուէի դնելով

խնդիրը՝ ժողովը միաձայն ՈՐՈՇԵՑ թէ դո՞ւ եղած է Յանձնախումբին յայտարարութենէն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը մնայ այժմ դժնիակ նիստի խնդիրն որոշել, յանձնախումբն յառաջիկայ նիստը դժնիակ կառաջարկէ իւր պարբերական համարատուութիւնն ընելու համար, իսկ խնդրողներ կան որ այս նիստն ութ օրէն տեղի ունենայ: Այս մասին եւս ժողովին որոշումը պիտի խնդրեմ, սակայն հարկ է կարծեմ, գիտնալ նաեւ թէ Յանձնախումբը մինչեւ ութ օր՝ կրնայ պատրաստուիլ իւր համարատուութիւնն ընելու:

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Յանձնախումբը իւր համարատուութիւնն ընելու համար պատրաստուելու պէտք չունի, եւ երբ որ ուզէք կրնայ ներկայել զայն, կը բաւէ որ դժնիակ նիստի մէջ ըլլայ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ապա ուրեմն վաղը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սխալ ըմբռնում մ'ալ կայ, զոր պէտք է ուղղել: Յանձնախումբին վերայ բնաւ անվստահութիւն չկայ, եւ եթէ Քրիստոստուր էֆէնտի առաջարկեց որ դժնիակ նիստն ութ օրէն ըլլայ, այն դիտմամբ էր որ ժողովին սովորական գործերն ետ չմնան: Իսկ Յանձնախումբը յառաջիկայ նիստին վերապահելով իւր համարատուութիւնը՝ անշուշտ կը կարծէր որ մինչեւ այն ատեն ժողովը դո՞ւ ընելու պարագաներ կային երեւան երնելիք:

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Դժնիակ նիստը ութ օրէն գումարելու առաջարկին համար չէր որ դիտողութիւն ըրի ես պահ մ'առաջ, այլ իմ դիտողութիւնս այն կէտին համար էր որ Յանձնախումբն առաջին հարցման պատասխանը տալէ ետեւ, Քրիստոստուր էֆէնտի վստահութիւն յայտնելով հանդերձ Յանձնախումբին վրայ, տակաւին կատարուած թղթակցութիւնն ալ կուզէ տեսնել, մինչդեռ Յանձնախումբն դժնիակ նիստի կը վերապահէր իւր համարատուութիւնը: Իսկ զալով այն կէտին

թէ երբ պէտք է դժնիակ նիստը, Յանձնախումբն յառաջիկայ նիստն առաջարկեց, եւ այս մասին ուրիշ նոր ըսելիք մը չունի:

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին դժնիակ նիստի առաջարկը քուէի կը դնէ եւ ժողովն՝ 43 քուէի ընդդէմ՝ 47 քուէով կ'ՈՐՈՇԷ: Ըստ առաջարկութեան Քրիստոստուր էֆէնտի ութ օրէն դժնիակ նիստ կազմել եւ Խորհրդարանական Յանձնախումբին պարբերական համարատուութիւնն ստանալ:

Այս պահուս՝ Եւսուֆեան էֆէնտի իջնելով Ատենապետի աթոռէն՝ առաջին Ատենապետն Սահփան փաշա Ասլանեան կանցնի պաշտօնին զլուխը եւ ձեռք կ'առնու Օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Ք

Ընտրութիւն երմտական Յանձնախումբի Ազգ. Ժողովոյ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Օրակարգի առաջին խնդիրն է մեր երմտական Յանձնախումբին ընտրութիւնը: Կը յիշէք քաջ որ Ազգ. Ժողովն հարկ դատելով կանոնաւոր եղանակի մը ներքեւ դնել իւր առանձին պիտոյից սնտեսութիւնն՝ որոշեց որ ուրեմն անջատել զայն կեդրանտուկի ծախուց մատակարարութենէն, եւ երեւմտից ուրոյն Յանձնախումբ մ'ընտրել, որ պաշտօն ունենայ կեդր. սնտուկէն զանձել Պիտոնէն մէջ սահմանեալ իւրաքանչիւր ճիւղի ծախուց գումարներէն՝ Ազգ. Ժողովոյ պիտոյից բաժնին վերաբերելի մասն, եւ Երեւ-

մայց Հոգարարձութենէն անկախ՝ յանձանձել տպագրական, կան կարասեաց եւ այլ ծախքերը, զորս կը սպանանջեն պիտոյց մեր ժողովին, տարեգլխին հաշիւը մեզ ներկայացունելու պատմանաւ: Ժամ է արդ սոյն Յանձնախումբն ընտրելու, ըստ նախորդ որոշման, եւ Գիւանը, գիտէք, որ ըստ կանոնի իրաւունք ունի այս պարագային մէջ ընտրելեաց սրբազրելի ցանկ մը ներկայել ձեզ: սակայն այս ցանկը բաղձրինակ պատրաստուած չէ՝ որ ամենուր ցըրուեմք: Եթէ կրնգունիք բերանացի ներկայեմ ձեզ զիւսմին ընտրելիները:

ՁԱՅՆԵՐ. — Այո, այո:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն անուասիկ երեք ընտրելի ձեզ:

- 1. Ղազարոսեան Քրիստոստուր էֆէնտի
2. Հովուեան Ղազար
3. Քափուքճեան Սարգիս

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ասոնց հետ պէտք է միանայ նաեւ ժողովիս առաջին Ատենապետը, Մէլիքեան Մկրտիչ էֆէնտի, որու ձեռք տեղի կուենան զլխաւոր ծախքերը:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Շա՛տ աղէկ, ուրեմն չորս ընտրելի կը ներկայեմ ձեզ, յաւելցընելով առջի երեքին վրայ նաեւ մեր առաջին Ատենապետը:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Միայն թէ կաշտեմ որ իմ տեղս ուրիշ մ'առաջարկել հաճիք. զի չեմ կարող ընդունիլ ես այդ պաշտօնը:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ես եւս չեմ կարող այլ որ առաջարկել ձեր տեղ, զի դուք Ազգ. Ժողովոյ պահապանն կը հանդիսանաք, ուտի պէտք է որ չղանաք այս ծառայութիւնն, որ ուղղակի ժողովին իրեն կը վերաբերի:

Եւ ատենապետ փաշան քուէի դնելով Երեւմտից Յանձնախումբին համար առաջարկուած անդա՛նց ընտրութիւնը, ժողովը միաձայն

ԸՆԴՈՒՆԵՑ զայն, հետեւապէս կազմուեցաւ Յանձնախումբը չորս անդամօք, որք են՝

- Քրիստոստուր էֆէնտի Ղազարոսեան
  - Ղազար » Հովուեան
  - Սարգիս » Քալուքեան եւ
  - Մկրտիչ » Մէլիքեան, առաջին
- Ատենադպիր Ազգ. ժողովոյ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Գիւանը պիտի ծանուցանէ այս ընտրութիւնն թէ Ազգ. վարչութեան եւ թէ Յանձնախումբի անդամօք, որպէս զի հաճին ձեռն ի գործ արկանել եւ կանխելով բանակցել Համարակալութեան գիւանի հետ, պատշաճապէս անօրինել ժողովիս պիտայքները :



Վիճաբանութիւն Պիւտձէի 33-ՏՅ ամի (Շարունակութիւն)

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ժողովն իւր անցեալ նիստին մէջ՝ Սահմանադրական տարւոյս համար ծրագրուած կեդր. սնտուկի երկրացոյցի ծախուց մասը քննեց եւ քուէարկեց ինչ ինչ բարեփոխումներով, եւ մնաց հաստ. թից մասը, զոր պիտի քննէ այժմ, ուստի յօդուած առ յօդուած ձեր գիտողութեան կը ներկայեմ զայն :

Յօդ. ԺԳ. Կեդրոնական ուղղակի տուրք տարեկան 150,000 զրշ. Կեդր. սնտուկին համար ենթադրել արժան զատուեցաւ, նկատելով նախորդ տարիներու մէջ զանձեալ գումարները : Ինչ որ ալ ըլլան նոր հաստատելի տրոց կանոնադրին տալիք զիւրութիւնները, տակաւին ներկայ տարւոյն համար այդ մասին աւելի ընդարձակութիւն ունենալ ենթադրել զգոյշ պէտք է լինել, մանաւանդ անոր համար որ օրէն է երկուսոցին ծախքերը քիչ մ'աւելի, իսկ հաստ. թից մասը նուազ ենթադրել :

Որ եւ է գիտողութիւն տեղի չունենար եւ Ատենապետ փաշան քուէի դնելով սոյն յօդուածը՝ ժողովը միաձայն կ'ընդունի զայն անփոփոխ՝ եւ կանցնի յաջորդին :

Յօդ. ԺԵ. — Առաջնորդական վիճակներէն Կեդրոնական սնտուկին համար ներկայ տարւոյս մէջ հաւաքելի գիւանական տուրքը (մուգաթա անուն) 400,000 զրշ որոշել արժան զատուեցաւ : Ազգ. ժողովոյ մէջ՝ այս տրոց բաշխման մասին վարչութեան նախորդ առաջարկութեան վրայ եղած գիտողութիւնները նկատողութեան առնելով, յիշեալ գումարին վրայ նոր բաշխումը վարչութիւնն ինք կատարելու համար Ազգ. ժողովէն արտօնութիւն կը խնդրէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Համարակալութեան գիւանին տեղեկարարը կը հաճի՞ արդեօք յայտնել ժողովին թէ Առաջնորդական վիճակներուն գիւանական տրոց քանակութիւնն ինչ որ նշանակուած է սոյն յօդուածին մէջ, նոյնն էր յառաջ՝ թէ ոչ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — (Տեղեկարար) Կը յայտարարեմ որ այս տրոց տարեկան քանակութիւնն 97,000 զրշ էր, իսկ այժմ 7,000 զրշի վերադրութեամբ 100,000 զրշ նշանակուած է :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն յօդուածը երկու կէտ կը պարունակէ, մինն է Առաջնորդական վիճակաց գիւանական տրոց վրայ եղած փոքրիկ վերադրին, եւ միւսը նոյն գումարին բաշխումը վարչութեան յանձնելու առաջադէն. ուստի պէտք է այս երկու կէտերուն վրայ առսնձինն յայտնէք ձեր կարծիքն, եթէ ունիք ինչ ըսելու :

Որ եւ է գիտողութիւն տեղի չունենար սոյն կէտերուն վրայ, եւ Ատենապետ փաշան քուէի դնելով յօդուածն ամբողջ, ժողովը կ'ընդունի զայն անփոփոխ եւ կանցնի յաջորդին :

Յօդ. ԺԶ. — Կ. Պօլսոյ երկեղեցիներէն Կեդ-

րոնական սնտուկին համար ներկայ տարւոյն մէջ հաւաքելի գիւանական տուրքը (քանչէլէր անուն) 30,000 զրշ որոշել արժան զատուած է : Մուգաթայի համար եղած գիտողութեանց համաձայն՝ ասոր ալ նոր բաշխումը կատարելու համար միւսնոյն արտօնութիւնը խնդրելով վարչութեան համար :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Քանչէլէրի տուրքն եւս՝ Մուգաթայի նման փոքրիկ վերադր թ'ընդունած եւ 24,000 զրշէն վերածուած է 30000 զրշ. ի :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն նախորդ յօդուածին հետ նոյն են իրենց տրամադրութիւններն եւ անոր նման՝ այս ալ երկու կէտ կը պարունակէ : Ուստի կը խնդրեմ որ երկուքին վրայ զատ զատ յայտնէք ձեր կարծիքը :

(Երեսփոխանք կը լռեն)

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կը լռէք, ուրեմն կուղէք ընդունիլ, սակայն մեր մէջ թաղական խորհրդականներ կան՝ պէտք է գիտնան որ Քանչէլէրի տրոց վրայ՝ թէ եւ դուզնաքեայ՝ վերադր մը տեղի կունենայ, մի գուցէ անուշադիր գտնուին այս ժամուս, եւ ի վերջէ որոշման գործադրութիւնը տեսնելով սկսին տըրտունջ բառնալ : Հարկ է զայս եւս ըսել որ վարչութիւնը թէ մուգաթայի եւ թէ բանջիւրի տրոց նոր բաշխումը կատարելէ ետեւ՝ պիտի հաճի անուշտ հաղորդել մեզ իւր ցուցակը :

Որ եւ է գիտողութիւն տեղի չունենար, եւ Ատենապետ փաշան քուէի դնելով սոյն յօդուածն ամբողջ՝ ժողովը միաձայն կ'ընդունի զայն անփոփոխ՝ եւ կանցնի յաջորդին :

Յօդ. ԺԷ. Ազգահամարի գրասենեակին առուծախի վկայագրէ 90,000 զրշ. ենթադրեալ է նախկին տարիներու համեմատութեամբ, Սոյն հաստ. թից ինչպէս նաեւ յետագայ անուղղակի տրոց հաստ. թից զանձման մանրա-

մասն պայմաններն անուղղակի տրոց կանոնադրի ծրագրով պիտի մատուցուին Ազգային ժողովոյ :

Իսկ ազգահամարի գրասենեակին ճամբորդներէն հասոյթ 25,000 զրշ. ենթադրեալ է, արդէն հաստատեալ սովորութեան համաձայն դանձելու արտօնութեամբ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այս յօդուածին մէջ կէտ մը կայ բացատրութեան կարօտ : Ազգահամարի գրասենեակի ճամբորդներէ հասոյթ 25,000 զրշ. կենթադրէ, եւ կը յարէ թէ արդէն հաստատեալ սովորութեան համաձայն պիտի դանձուի : Ո՞րն է այս սովորութիւնը, հարկ է կարծեմ երկու բառով բացատրել զայն :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ըսել կուղէ թէ ըստ առաջնոյն 12 զրշ. պիտի առնուի մէճիտ գրամով իւրաքանչիւր ճամբորդէ :

Որ եւ է գիտողութիւն տեղի չունենար եւ Ատենապետ փաշան քուէի դնելով զատ զատ՝ ազգահամարի գրասենեակին կրկին ճիւղերու հաստ. թից համար ենթադրեալ գումարները, ժողովը միաձայն յօդուածն ամբողջ կ'ընդունի անփոփոխ՝ եւ կանցնի յաջորդին :

Յօդ. ԺԸ. Նշանտուութեան հասոյթ՝ ըստ նախկին հաստ. թից 60,000 զրշ ենթադրեալ է :

Որ եւ է գիտողութիւն տեղի չունենար եւ Ատենապետ փաշան քուէի դնելով սոյն յօդուածը՝ ժողովը միաձայն կ'ընդունի զայն անփոփոխ՝ եւ կանցնի յաջորդին :

Յօդ. ԺԹ. Պատկադրութեան հրամանի հասոյթ ըստ նախկին հաստ. թից 20,000 զրշ ենթադրեալ է :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Այս հասոյթը ենթադրութեան աւելի կը դոյանայ եւ ոչ պակաս :

Աւրիշ գիտողութիւն տեղի չունենար եւ Ատենապետ փաշան քուէի դնելով սոյն յօդուածը՝ ժողովը միաձայն կ'ընդունին զայն անփոփոխ՝ եւ կանցնի յաջորդ յօդուածին:

Յօդ. Ի Գիւանապետ հասոյթ ըստ նախկին հասութից 8,000 զրչ ենթադրեալ է:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կը հաճի՞ մեզ բացատրել Համարակալութեան գիւանը թէ ի՞նչ գործողութենէ կը գոյանայ այս հասոյթը:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Այս հասոյթը գըլխաւորաբար կը գոյանայ ծննդեան եւ մկրտութեան վկայագրերէ, փոխանորդագրերու եւ այլ զանազան գրութեանց վաւերացումներէ, որոս գիւանատունը կը կատարէ:

Որ եւ է գիտողութիւն տեղի չունենար, եւ Ատենապետ փաշան քուէի դնելով սոյն յօդուածը՝ ժողովը միաձայն կ'ընդունին զայն անփոփոխ՝ եւ կանցնի յաջորդ յօդուածին:

Յօդ. ԻԱ. Գտտական վճարողի հասոյթ թէ եւ ըստ նոր կարգադրութեան աւելի մեծ գումար ենթադրել կարելի է, բայց առ այժմ 7,000 զրչ նշանակել բաւական կը համարուի:

Որ եւ է գիտողութիւն տեղի չունենար եւ Ատենապետ փաշան քուէի դնելով սոյն յօդուածը՝ ժողովը միաձայն կ'ընդունին զայն անփոփոխ՝ եւ կանցնի յաջորդ յօդուածին:

Յօդ. ԻԲ. Գրչման զիջի հասոյթ ըստ նախկին հասոյթից 1,500 զրչ կենթադրել:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ինչ է այս գրչման զիջ ըսուածը:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Պատրիարքարանը կալուածական առուծախի վկայագրերուն գործածութեանը համար՝ բունաւոր եւ գրչման թուղթեր կուղարկէ Քաղ. խորհրդոց, որք կը պարտաւորին այս թղթոց վրայ գրել առուծախի վկայագրերը վկայագրին բունը կը պահեն:

որ արձանագրութեան տեղ կը ծառայէ, եւ անկէ կտրուած մասը կը յանձնեն գործին տիրոջը, զոր տանելով Պատրիարքարանի անցագրատունը, կատանայ կանոնական իրութեան պէրը:

Որ եւ է գիտողութիւն տեղի չունենար, եւ Ատենապետ փաշան քուէի դնելով սոյն յօդուածը՝ ժողովը միաձայն կ'ընդունին զայն անփոփոխ՝ եւ կանցնի յաջորդ յօդուածին:

Յօդ. ԻԳ. Զանազան արտաքոյ կարգի հասոյթ եւ նուէր ըստ նախկին հասոյթից 22,000 զրչ կարելի է ենթադրել, Ազգ. ժողովոյ առենադրութեան եւ այլ պաշտօնական հրատարակութեանց հասոյթներն ի միասին հաշուելով:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Հասոյթից այս մասը քանի մը ճիւղերէ կը բաղկանայ, որոց գլխաւորն է եկեղեցեաց մէջ թաղուող ննջեցելոց համար առնուած գրամը:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Շատ փափաքելի էր որ այս տեսակ հասոյթից մէջ տուրք եւ նուէր անջատարար նշանակուէին:

Աւրիշ որ եւ է գիտողութիւն տեղի չունենար, եւ Ատենապետ փաշան քուէի դնելով սոյն յօդուածը՝ ժողովը միաձայն կ'ընդունին զայն անփոփոխ՝ եւ կանցնի յաջորդ յօդուածին:

Յօդ. ԻԴ. Կոնդակագին կարելի է ենթադրել 4000 զրչ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ո՞վ կը վճարէ այս տուրքը, կոնդակն առնողը թէ կոնդակի որոշած պաշտօնատուներ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ինչ կոնդակ որ կը տրուի, գին մը, ծախք մ'ունի, եւ կոնդակն ստացողները զայն կը հասուցանեն:

Որ եւ է գիտողութիւն տեղի չունենար, եւ Ատենապետ փաշան քուէի դնելով սոյն յօդուածը՝ ժողովը միաձայն կ'ընդունին զայն անփոփոխ՝ եւ կանցնի յաջորդ յօդուածին:

Յօդ. ԻԵ. Զրնտանի հասոյթ ըստ նախկին հասութից 2,500 զրչ ենթադրեալ է մայրաքաղաքի եկեղեցիներէն:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ծախուց մասին մէջ ընդունուած է արդէն այս յօդուածին պարունակութիւնը:

Որ եւ է գիտողութիւն տեղի չունենար, եւ Ատենապետ փաշան քուէի դնելով սոյն յօդուածը՝ ժողովը միաձայն կ'ընդունին զայն անփոփոխ՝ եւ կանցնի յաջորդ յօդուածին:

Յօդ. ԻԶ. Ծննդոց եւ վախճանմանց վկայագրի հասոյթ ըստ առաջարկելի նոր կանոնին՝ ներկայ տարուոյ համար 20,000 զրչ կարելի է ենթադրել, որովհետեւ պէտք է որ այս անուզակի տուրքն ընդհանրանայ:

ԻԹԻՒՃԵԱՆ Յ. ԷՖ. — Անկարելի է որ այսքան գումար գոյանայ ծննդոց եւ վախճանմանց հասոյթէն:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Փափաքելի էր որ սոյն տեսակ հասոյթից համար նախ օրէնքներն սահմանուէին եւ ապա անոնց արտադրելիք հասութից գումարներն:

Աւրիշ գիտողութիւն տեղի չունենար եւ Ատենապետ փաշան քուէի դնելով սոյն յօդուածը՝ ժողովը միաձայն կ'ընդունին զայն անփոփոխ:

Յօդ. ԻԷ. Ըստ այսմ բովանդակ հասոյթ կենթադրել 1879-1880 տարուոյ համար 540,000 զրուչ, որով ծախքը գիտաւորուած է:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այս յօդուածը կը ներկայէ համապետարը հասութից, որ նշանակուած են նախորդ յօդուածոց մէջ եւ որ արդէն ժողովից քուէէն անցան. ուստի հարկ չկայ նոյն յօդուածը քուէարկել: Ընդհանուր համադրումարն է քուէարկեալ հասութից 540,000 զրչ: եւ նոյն քանակութեամբ ենթադրեալ եւ քուէարկեալ է՝ նաեւ ծախուց գումարը: Ծա-

խուց քանի մը ճիւղերուն մէջ յաւելումներ եւ զան, 2,400 զրչի վերադիր մը՝ նոյապի ամսականաց գլխոյն մէջ, եւ 3,000 զրչի յաւելում մը՝ տպագրական ծախուց ճիւղին մէջ, ըսել է ընդ ամենը տարեկան 5,400 զրչ գումար մը աւելի նշանակուեցաւ Վարչութեան ենթադրածէն, բայց այդ վերադիրը վճարելի է անշուշտ պահեստի գումարէն, յորմէ պէտք է ղեզշել զայն եւ մնացորդը պահեստի գումար նշանակել, եւ այսպէս սրբապարկ Նլմտացոյցն:

Հարկ չկայ կարծեմ Վարչութեան յանձնարարել որ հոգ տանի Նլմտացոյցին ներդաշնակութիւնը ապահովելու համար անոր հիմունքն ամբողջովն Ասոր համար ի մէջ այլոց կարեւոր է՝ ամեն կարգի արոց վերաբեւեալ օրինաց ծրարագրերը պատրաստել փութով եւ Ազգ. ժողովոյ հաւանութեան մատուցանել: Իսկ այժմ որ աւարտեց ժողովը Նլմտացոյցի հասութից մասն՝ Նլմտացոյցն ամբողջ կատարուած բարեփոխումներով օրտի ենթարկեմ ժողովից վերջին մի քուէին:

Հետեւալիս առենապետ փաշան քուէի դնելով Սահմանադրական ներկայ 1879-1880 տարուոյ Նլմտացոյցն նախորդ եւ ներկայ նխատեւուն մէջ կատարուած բարեփոխումներով, ժողովը միաձայն կ'ընդունին զայն:

ԱՏԱՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Սահմանադրութեան հաստատութենէն ի վեր տասն եւ վեց տարիներ անցան եւ այս առաջին անգամն է որ ժողովը այսպէս մանրազնին զննութեամբ տարեկան եմտացոյցը կը սահմանէ, եւ քուէարկելով զայն կը յանձնէ Վարչութեան, որ անոր գծած սահմանին մէջ անտեսէ ազգին ծախքերը: Կը շնորհաւորեմ ուրեմն ժողովը իւր այս սահմանադրական մեծ գործողութեան համար, եւ կանցնիմ Օրակարգի երկրորդ խնդրոյն:

ԱՏԱՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Սոյն յօդուածը կը ներկայէ համապետարը հասութից, որ նշանակուած են նախորդ յօդուածոց մէջ եւ որ արդէն ժողովից քուէէն անցան. ուստի հարկ չկայ նոյն յօդուածը քուէարկել: Ընդհանուր համադրումարն է քուէարկեալ հասութից 540,000 զրչ: եւ նոյն քանակութեամբ ենթադրեալ եւ քուէարկեալ է՝ նաեւ ծախուց գումարը: Ծա-

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Փամանակը կընէ ամէն բան:



Տեղեկագիր նախաձեռնութեան դիւանի ի վերայ ծրագրի եօթն յաւելուածական կէտերու.

Ազգ. ժողովոյ Կանոնադրութեան

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ինչպէս կը յիշէք ասկէ շատ առաջ՝ մեր ներքին Կանոնադրութեան համար եօթն յօդուածով յաւելում մը առաջարկած էի քանի մը կանոնական կէտերու վրայ, եւ նախաձեռնութեան դիւանն ուրու քննութեան յղուած էր առաջարկն, այդ յօդուածոց յաւելումը պատշաճ եւ օրինաւոր դատած էր, ինչպէս կը յայտնէր իւր տեղեկագիրովը: Հաղիւ ուրեմն օրակարգը զայն կը բերէ մեզ այսօր, թէ եւ շատ առաջ փորձերն կանխեցին մեզ հաստատելու թէ որքան կաշուար էին այդ յօդուածներն, որոց մէկ քանին արդէն ժողովն ինքն ինքնին զանազան պարագայից բերմանց առջեւ ընդունած է եւ կը գործադրէ: Այժմ մի առ մի նոյն եօթն յօդուածներ ժողովոյց դիտողութեանը եւ որոշմանը կը ներկայեմ:

Յօդ. Ա. Ազգ. ժողովոյ տարեկան շրջանի բացման նախադասական ձառննքն որ գրաւոր կերպով պէտք է ըլլայ, ժողովը կը պատասխանէ ուղերձով մը, զոր առնապետաց դիւանը կը ծրագրէ եւ ժողովը վիճարանութեամբ կը խմբագրէ իւր կրթորդ կամ շորթորդ նախնի մէջ, ուր Ս. Պատրիարքը փոխանորդով մը կը նախագահէ ժողովին: Սոյն ուղերձը Մայր դիւանի միջոցաւ կը ներկայացուի Ս. Պատրիարքին:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. Դուք ընդունած էք արդէն ուրիշ առթիւ այս յօդուածին տրամադրած կանոնը եւ զայն կը գործադրէք. միայն պարագայ մը կայ, որ տակաւին ձեր քուէով չէք նուիրագործած: Յօդուածը կը տրամադրէ որ ժողովոյ երրորդ կամ չորրորդ նիստին, ուր ուղերձը կը խմբագրուի, Ս. Պատրիարքը փոխանորդով մը նախագահէ, այն է բացակայ գտնուի ժողովէն, որպէս զի իր ներկայութեան իրեն արուելու պատասխանին վրայ վիճարանելու անպատշաճութիւն տեղի չունենայ:

Այս կէտն է որ ձեր ուշադրութեան կը յանձնարարեմ եւ զոր տակաւին չէք քուէարկած:

Որ եւ է դիտողութիւն տեղի չունենար, եւ Ատենապետ փաշան քուէի գնելով սոյն յօդուածը ժողովը միաձայն ԿԸՆԴՈՒՆԻ զայն անտիփօսաւ եւ կանցնի յաջորդ յօդուածին:

Յօդ. Բ. Իւրաքանչիւր ատենի սկիզբն ատենական գործողութեանց համար առ առաւելն մէկ ժամ կը զոհուի, ի լրման ժամուն անկատար մնացած գործողութիւնք յաջորդ նիստին կը ձգուին: Բացի ժողովով ստիպողականութիւն տրուած խնդիրներէն որ առ ժամայն կը լուծուին:

Որ եւ է դիտողութիւն տեղի չունենար, եւ Ատենապետ փաշան քուէի գնելով սոյն յօդուածը, ժողովը միաձայն ԿԸՆԴՈՒՆԻ զայն անտիփօսաւ եւ կանցնի յաջորդ յօդուածին:

Յօդ. Գ. Դիւաններուն կամ մասնաւոր Յանձնախումբերու քննութեան յանձնուած անձնիւր խնդրոց համար պայմանաժամ կորուսի տեղեկագրութեան, զոր ժողովը ատենապետին առաջարկութեան վրայ ձեռամբարձով կը սահմանէ առանց վիճարանութեան, եւ բոլոր յանձնարարելու խնդրոց ցուցակը ժողովարանին մէջ յարածամ ի տես ամենից կը գրուի Ատենապետին խնամօքն:

ՄԻՐԵԼԻՍ-ԳՈՒԼԻ Յ. ԷՃ. — Դիւաններու կողմութիւնն այն նպատակն ունի որ մէն մի խնդիր՝ որ լուծում կը խնդրէ, ձեռնհաս անձանց ձեռօք նախաքննուի, եւ զտուած պարզուած ժողովին քննութեան եւ որոշման ներկայանայ: Ուստի երբ ժողովն խնդիր մ'այս կամ այն դիւանին կը յղէ, կը նշանակէ թէ զայն կը գտնէ ձեռնհաս այն խնդիրն իմաստասիրելու, ինչպէս ուրեմն կրնայ ինքնին անոր աշխատութեան պայմանաժամ սահմանել կանխաւ, երբ անյայտ է իրեն թէ որքան աշխատութեան եւ ժամանակի կը կարօտի խնդիրը, որով կը հարկադրի դիւանն որքան ալ ծանրակշիւ լինի խնդիրն եւ քննութիւնն որքան ալ երկարաշխատութեան կարօտ, նախորդ պայմանաժամուն մէջ աւարտելու համար հայտնելով կատարել

պաշտօնը: Այս դիտողութիւնն ընելով կը խնդրեմք որ հաճիք, Ատենապետ փաշա, բացատրութիւն մը տալ մեզ որ կարենամք կատարելու համոզու մոզ քուէարկել այս յօդուածը:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այդ յօդուածը վերջ կուտայ այն անսահման երկարաձգմանց, որոց հանդիպած են շատ անգամ դիւաններու յանձնարարելու խնդիրներն:

Իսկ յաջորդ յօդուածը կը ընծայէ անոնց ինչ դիւրութիւն որ հարկաւոր է ձեր նախատեսած պարագայից մէջ, Նթէ ուրիշ դիտողութիւն չկայ, քուէարկենք Գ. յօդուածը, եւ յաջորդը պիտի պատասխանէ ձեզ աւելի համոզելու կերպով եւ լուծէ ձեր վարանքը:

Ատենապետ փաշան կը կարգայ Գ. յօդուածը եւ Գ. ին վրայ ուրիշ որ եւ է դիտողութիւն տեղի չունենալով, Ատենապետ փաշան քուէի կը գնէ զայն, եւ ժողովը միաձայն ԿԸՆԴՈՒՆԻ անտիփօսաւ եւ կանցնի Գ. յօդուածին:

Յօդ. Դ. Որ եւ է դիւան կամ յանձնախումբ պարտաւոր է իր քննութեան յանձնուած խնդրայն տեղեկագիրը պայմանեալ ժամանակին բերել եւ կամ չկրնալ բերելուն պատճառը գրաւոր բացատրել ժողովին: Պայմանաժամին տեղեկագիր կամ բացատրութիւն չբերող դիւան կամ յանձնախումբը ազդարարութիւն կընդունի դիւանէն յատենի ժողովոյ, եւ երկրորդ անգամ պայմանաժամ որոշուելով, եթէ դարձեալ պարտագանց գտնուի, դժգոհութեան քուէ կընդունի ժողովէն եւ տեղն ուրիշ մը կընտրուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ահաւասիկ այս յօդուածը նախորդը կամրողացնէ, պայմանաժամովն տեղեկագիրը չբերող դիւանը պատճառը կրնայ բացատրել ժողովին եւ զայն գոհացնել, իսկ այն որ բոլորովին պարտագանց կը գտնուի, կիցնայ պաշտօնէն: Իրաւ խիստ է քիչ մը, բայց ուրիշ հնար չկայ գործերը վարելու համար:

Որ եւ է դիտողութիւն տեղի չունենար,

եւ Ատենապետ փաշան քուէի գնելով սոյն յօդուածը, ժողովը միաձայն ԿԸՆԴՈՒՆԻ զայն անտիփօսաւ եւ կանցնի յաջորդ յօդուածին:

Յօդ. Ե. Որ եւ է հարցում կամ հարցապնդում առ Աւարչութիւն, գրաւոր դիւանին աւանդուելէ ետեւ կը կարգացուի յատենի ժողովոյ, եւ կը զրկուի առ հարցեալ կամ հարցապնդեալ պաշտօնեայն, որ պարտաւոր է յաջորդ նիստին կարծիքն յայտնել կամ ուղղակի պատասխանել բանիւ կամ գրով, իսկ եթէ հարցման կամ հարցապնդման ստիպողականութիւն տրուի ժողովով, հարցեալ կամ հարցապնդեալ պաշտօնեայն, պարտի նոյն նիստին վերջերն պատասխանել կամ կարծիքն յայտնել:

Ատենապետ փաշան յայտարարելով այս պահուս թէ իբր հեղինակ առաջարկութեան քանի մը բացատրութիւն տալ կուզէ սոյն յօդուածին վրայ, իւր ակտիւր կը թողու երկրորդ Ատենապետ Նուսուֆեան էֆէնտի, եւ ինքն ատենարանից բեմը կելնէ եւ կսկսի խօսիլ:

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Ձեր մասնաւոր ուշադրութիւնը պիտի հրաւիրեմ այս յօդուածին վրայ, որ մեծ նշանակութիւն ունի: Մեր կանոնադրութեան հոգեւոյս հեղինակը չթափախելու մ'ըրած է հարցման եւ հարցապնդման մէջ, որով այս երկուքը թէ եւ իրարմէ տարբեր, սակայն ի մի խմբուած են կանոնադրութեան 82 եւ 83 թղ. յօդուածոց մէջ: Հստ պէտք է կանգ առնուած եւ յայտարարեմ կանխաւ թէ այս դիտողութիւնն ընելով բնականացնի մտքէս ժխտել բարեխոյառակ հեղինակին իմաստութիւնը եւ կատկածի ենթարկել անոր սխալատեղեկ յարգը. ոչ երբէք, ահոր գործը մեծ արժէք ունի, եւ մեծ արդիւնք ունեցաւ մեր մէջ. եւ ինչ որ ալ ըլլան խումբագրած կանոնադրութեան պակասներն, իմ համարումս եւ յարգանքս անոր ձեռնհասութեան եւ արժանեաց նկատմամբ անայլայլ պիտի մնայ միշտ, մասնաւոր որ նոյն իսկ Եւրոպական ազգաց խորհրդարաններուն մէջ այս եւ ատոնց նման խել մը կանոնական կէտերու վրայ կը պակսին գրաւոր բացատրութիւնք, եւ

տոննական սովորութիւններ կան որ աւանդութեամբ կը տիրեն իբր կանոն :

Հարցում եւ հարցապնդում մէջ աւելի կուենան եւ տարբեր բաներ են իրարմ, անոնց զանազանութիւնն որոշել անհրաժեշտ է : Հարցումը այս կամ այն խնդրոց վրայ ճշմարտութեան վերահասու ըլլալու հետաքրքրութենէն կը ծնի, եւ ի պատասխանի տեղեկութիւն մ'առնելով գո՛, կըլլայ . իսկ հարցապնդումը Վարչութեան մէկ արարքին, մէկ անօրէնութեան գծգո՛ հետաքննութիւնն է, որ ընդունած պատասխանը կը քննադատէ եւ վիճարանութեան տեղի տալով հուսկ յետոյ կը դատախեանք Վարչութիւնը կամ անոր արդարութեանը համոզուելով գո՛ հունակութիւն կը յայտնէ : Վարչութիւնը չեն կորոզ խուսափել ասոնց ոչ մէկէն եւ ոչ միւսէն, բայց ի՞նչո՞վ : Երբ հարցում մը տեղի կուեննայ, Վարչութիւնը նախ կը տեղեկանայ, կը պատրաստուի եւ ապա կը պատասխանէ կամ ուղղակի խնդրուած տեղեկութիւնը կատարելով տալով, եւ կամ եթէ խնդիրը տակաւին հասուն չգտնեն չափաւոր կերպով եւ կամ եթէ, բնաւ չէ կարող բացատրութիւն տալ, համարատուութեան ժամուն կը թողու պատասխանը, համարատուութիւն, որ ընդհանրապէս Եւրոպայ կը կատարուի զանազան խնդրոց վրայ եղած թղթակցութիւններն մաս առ մաս գունաւոր տետրակով մը հրատարակելով :

Հոս արժան է յիշել որ գտնուեցան մեր մէջ ալ վարչութիւններ որ այսպէս իրենց ուղղելու հարցմանց պատասխանները վերապահեցին համարատուութեան ժամուն, եւ պաշտօնատարութեան պայմանաժամուն լրման եւ երբեմն նաեւ անկէ տուած կրան գնացին առանց համար ներկայելու :

Ինչ որ ալ ըլլայ, հարցման պատասխանը լսուելէն ետքը՝ խնդիրը կը գոցուի իբր միջադէպ եւ ժողովը կանցնի իր օրուան խնդրոյն : Իսկ երբ հարցապնդում տեղի կուեննայ գործն այսպէս չկատարուի եւ այս կերպով չվերջանար : Նախ հարցապնդումը կը հրատարակուի ժողովին մէջ, այսինքն ի՞նչ նիւթի վրայ եւ ո՞ր որ հարցապնդելու կամք ունենալը կը յայտնէ հեղինակը ժողովին, եւ Վարչութեան հա-

ւանութիւնն աւանուելով վիճարանութեան օրը կը սահմանուի : Այս կէտին մէջ՝ ուշագրութեան արժանի պարագայ մը կայ որ է եթէ Վարչութիւնը ժամանակ մի եւս առաջարկեալ հարցապնդումը չկրնայ կրել իբր յայտնելու ըլլայ, ժողովը չկրնար ստիպել զնա որ անպատճառ ընդունի : զի այս ստիպումն անվստահութիւն կենթադրէ եւ Վարչութիւնը հրաժարման կատաճնորդէ : Ինչ որ ալ ըլլայ, որոշեալ օրն հարցապնդումը տեղի կուեննայ եւ յետ վիճարանութեան պարզ եւ անխափ օրակարգի եւ կամ պատճառաբանեալ օրակարգի մը քուէարկութեամբ խնդիրը վախճան կառնու, եւ ժողովը կը դառնայ իր օրուան կարգին : Ինչպէս կը տեսնէք խորհրդարաններու մէջ հարցման եւ հարցապնդման անմիջական պատասխան չէ օրէն սլուանջել, այլ ժամանակ կը տրուի պաշտօնէին : վասն զի այս տեսակ պարագայից մէջ Վարչութիւն կամ պաշտօնեայ՝ թէ ժողովը եւ թէ հարցման նիւթ եղող խնդրոյն սահանջումները միանգամայն գո՛ ընել պարտաւոր է, վասն զի ժողովը գո՛ ընելու համար՝ չկրնար միւս կողմէ գործին վրնաս բերել : ուստի անմիջական պատասխան պահանջել կարելի չէ, այլ ժամանակ տալու է, որ կանխաւ գիտնայ եւ կշռէ ըստ պարագայից տալիք պատասխանը : Ահա այս պատճառաւ առաջարկեալ յաւելուածական յօդուածը կը տրամադրէ որ հարցում կամ հարցապնդում գրով զիւանին աւանդուելէն ետեւ՝ յուղարկուի առ հարցեալ կամ հարցապնդեալ պաշտօնեայն, որպէս զի մինչեւ յաջորդ նիստ յայտնէ, ինչ որ պիտի ըսէ :

Ասոնք են այն բացատրութիւնները, զորս կուղէի ձեզ ներկայացունել, եւ զոր կամեցիք փեմ սա խմբագրութեամբ իբր վերաքննութիւն կանոնին 82 եւ 83 յօդուածոյ :

Ա. Եւրաքանչիւր երեսփոխան իրաւունք ունի երբ որ ուղէ որ եւ է գործի կամ խնդրոյ մը վրայ հարցումն կամ հարցապնդումն ընել Ազգ. Վարչութեան : Հարցումը տեղեկութիւն ստանալու կամ եղելութիւն մ'ըստուգելու համար կըլլայ եւ պատասխանը պարզ տեղեկութիւնն է, իսկ հարցապնդումը

քննադատական ձգտում ունի եւ պատասխանը մինչեւ տարուան մը համարատուութիւնն է :

Բ. Հարցում կամ հարցապնդում գրաւոր կաւանդուի Մայր դիւանին, որ ատենական գործողութեանց կարգը կը հաղորդէ զայն ժողովին եւ կը յղէ առ որ ուղղեալն է ի պատասխանատուութիւն, որ պարտաւոր է հետեւեալ նիստին կարծիք յայտնել, եթէ հարցման կամ հարցապնդման հեղինակն ստիպողութիւն չը խնդրէ եւ կամ ժողովը չընդունի ստիպողութիւն : Իսկ հակառակ պարագայի մէջ՝ Վարչութիւնը պարտաւոր է նոյն նիստին վերջերք յայտնել կարծիքն ի պատասխանի հարցման կամ հարցապնդման :

Գ. Վարչութեան կարծիքը կամ ուղղակի պատասխանն է հարցման կամ հարցապնդման նիւթ եղող խնդրոյն, եւ կամ առժամանակեայ կատարելապէս պատասխանելն անկարելի կամ անպատշաճ ըլլալուն յայտարարութիւնը : Սոյն վերջին պարագայի մէջ Վարչութիւնը պարտաւոր է պայմանաժամ ցոյց տալ եւ պատրաստ գտնուիլ նոյն ժամանակ պատասխանելու՝ եթէ հարցումն կամ հարցապնդումը կրկնուի :

Դ. Վարչութեան կարծիքը կամ պատասխանը լսուելէն ետքը՝ Ատենապետն զհարցման խնդիրը կը գոցէ իբր միջադէպ, եւ կանցնի օրուան կարգին : Իսկ եթէ հարցապնդում կը կատարուի, Վարչութեան հաճութեամբ օր կատաճարկէ վիճարանութեան, եւ ժողովը զայն կը սահմանէ ձեռամբարձով առանց վիճարանութեան :

Ե. Արտշեալ օրը հարցապնդման վիճարանութիւնը տեղի կուեննայ, հարցապնդող եւ հարցապնդեալ՝ որքան անգամ որ պէտք ըլլայ իսկ ուրիշ երեսփոխանք ըստ կանոնի մինչեւ երկու անգամ խօսելէն ետքը, վիճարանութիւնը կը փակուի եւ պատճառաբանեալ օրակարգի մը քուէարկութեամբ վերջ կը տրուի հարցապնդման խնդրոյն, եթէ ժողովը պատշաճագոյն չգատէ պարզ եւ անխափ օրակարգն քուէարկելով փակել միջադէպը :

ՄԵՐԵՆԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՅ. — Կէս մը կայ, զոր կուզեմ հասկնալ, հարցում կամ հարցա-

պնդում տեղի ունեցած ատեն՝ ժողովը զայն չիւրացուցած՝ պարտաւորեալ է պատասխանել հարցապնդեալ պաշտօնեայն :

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Անհար է որ ժողովը հարցում կամ հարցապնդում ըստանձնէ. երեսփոխան մը կասկածէ մը դրդեալ կամ ուրիշ որ եւ է պատճառաւ հարցում մը կուղղէ, կամ հարցապնդումն ընել կուզէ, եւ Վարչութիւնն՝ որու յանձնուած է ազգին գործոց ղեկը, կը պարտաւորի զինքն արգարացընել, ժողովը է գատաւոր այս պարագային մէջ, ուստի պէտք է չէ զոք մնայ, եւ ի վերջէ յայտնէ իր կարծիքը պատճառաբանեալ օրակարգով, որով եւ միջադէպը կը գոցուի :

ՄԵՐԵՆԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՅ. — Հարցումը կամ հարցապնդումն իւրացնել ըսելով՝ ուզեցի ըսել թէ ժողովը պիտի հաւանի՞ որ տեղի ունենայ հարցումը կամ հարցապնդումը : Ես կը խորհիմ թէ այսպիսի պայման մը նշանակել անհրաժեշտ է, վասն զի երբ հարիւր քառասուն երեսփոխաններէն անձնուրը՝ մէն մի հարցում ուղղէ Վարչութեան, եւ նա հարկադրեալ լինի ամենուն պատասխանել, ոչ մի Վարչութիւն կրնայ զխմանալ այդ հարցապնդմանց տեղատարափին ներքեւ :

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Ճշմարիտ է ձեր դիտողութիւնը, բայց եւ պէտք է յիշել որ Վարչութիւնը մեծագոյն մաս կուեննայ միշտ ժողովոյ մէջ իրեն կուսակից, եւ արդէն առանց անոր չկրնար կանգուն մնալ. ուստի այս կողմէն երկնչելու տեղի չկայ : Եւրոպական ազգաց խորհրդարանները մինչեւ 800 եւ աւելի անգամ կուեննան, որոց ամէն մէկը հարցապնդման կատարեալ իրաւունք կը վայելին. եւ սակայն մէկուն մտքէն անցած չէ՝ որ հարցումն եւ հարցապնդումն ընելու իրաւունքը սեղմուի, որպէս զի վարչութիւնք հանդիսու վայելեն իրենց իշխանութիւնը : Եւ եթէ ձեր ըսած կերպով պայման նշանակուի, որ մինչեւ ժողովը չհաւանի, որ եւ է հարցապնդում տեղի չուեննայ, այն ատեն մեծամասնութիւնն

ար միշտ Վարչութեան կողմն է, կը մերժէ ամեն հարցապնդում եւ Վարչութիւնը կը խուսափի պատասխանատուութենէ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ես կը խորհիմ թէ մեր կանոնադրին մէջ անփոփոխ պահելով հարցապնդման վերաբերեալ յօդուածը, կըրնանք յաւելուլ նաեւ այս նոր յօդուածն ալ : Ամէն երեսփոխան միշտ իրաւունք ունի հարցում ուղղելու Վարչութեան, որ սարտաւոր է կամ պատասխանել ուղղակի կամ իւր կարծիքն յայտնել. եթէ չէ կարող խնդրուած տեղեկութիւնը տալ առ ժամայն : Սակայն երբ հարցապնդման ձեւ կանոն, այն է քննադատական վիճակի մէջ կը դրուի, այդ պարագային մէջ ժողովին կարծիքն առնուլ անօգուտ չթուիր :

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Եթէ կարեւոր բան մը կայ, հարցումը չէ, այլ հարցապնդումը, եւ անկարելի է որ ժողովին կամօքը տեղի ունենայ, վասն զի Վարչութիւնը իրեն կուսակից մեծագոյն մասով կրնայ միշտ մերժել հարցապնդումը :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Կը տեսնեմ որ փաշային առաջարկած յօդուածն աւելի կընդլայնէ երեսփոխանաց ազատութեան սահմանն ուստի ես կը համակերպիմ եւ անփոփոխ կընդունիմ իւր առաջարկը :

ՄԷՐԵԼԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Ես ալ կընդունիմ որ երեսփոխանաց ազատութիւնը պահելու համար հարցապնդումը ժողովին հաւանութեան չենթարկին : Միայն թէ պէտք է դիտել որ Եւրոպական ազգաց խորհրդարաններուն մէջ նահանգընդդէմ կուսակցութիւնը կան, որ իշխանութեան թեկնածու են, ուստի կը պահպանէ անձնիւր կուսակցութիւն իւր պաշտօնէութիւնը : Իայց մեր մէջ իրերը նոյն վիճակին մէջ չեն, ուստի սակաւ ինչ Վարչութեան ոյժ պէտք է առլ. ուստի սա բարեփոխումը կառաջարկեմ որ հարցապնդում մը մինչեւ քանի մը ձայնակից չգտնէ, չկրնայ տեղի ունենալ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Մեր Վարչութիւնն

արդէն անձնուէր եւ ձրի պաշտօնէութիւն մը լինելուն, մինչեւ ցարդ վարչութիւններն ինչ որ ուղեր կրցեր են ընել, եւ իրենց արարքներն ընդունուեր են միշտ, որ եթէ խստիւ դատաքննուէին, սլատասխանատուութիւն հրաւիրէին թերեւս անոնց վրայ : Հետեւաբար այս պարագային մէջ պէտք չէ կարծել որ վարչութեանց դէմ խստութիւնք ի գործ կը դրուին, ուստի եւ պաշտպանութեան կը կարօտին :

Ըստ իս լաւագոյն է առաջարկեալ յօդուածն ընդունել :

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Ես իբր հեղինակ առաջարկութեան՝ կընդունիմ Մէրեւմ-Գուլի էֆէնտի բարեփոխումը :

ՊԷՐՊԷՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Այս բարեփոխումն ընդունելով մի հակասութիւն պիտի քուէարկենք, որովհետեւ եթէ հարցապնդում մը երկու երեք երեսփոխանաց ձայնակցութեամբն ներկայանայ, օրինաւոր պիտի համարուի, ապա թէ ոչ, հարկ պիտի լինի զայն ժողովոյն քուէին ենթարկել. արդ կըրնայ ըլլալ որ նոյն իսկ ժողովոյն մեծամասնութիւնն առաջարկեալ հարցապնդման հակառակ ըլլալով, փոքր մաս մի համամիտ գտնուի, այսինքն 2-4 էն շատ աւելի բազմաթիւ մաս մը, թէպէտեւ այդ մասն մեծամասնութիւն կը կազմէ. եւ մենք որ 3-4 անձի ձայնակցութեամբ ներկայացեալ հարցապնդումը ընդունեցանք, շատ աւելի բազմաթիւ անձանց համաձայնութեամբն ներկայացեալը մերժած պիտի լինիք. եւ այս հակասութիւն մի է. ուստի կառաջարկեմ ընդունիլ այդ բարեփոխումը :

ԱՏՆԱՊԵՏ ԷՖ. — Կը խնդրեմ որ Մէրեւմ-Գուլի էֆէնտին հաճի գրով աւանդել զիւսնիս իւր առաջարկած բարեփոխումը :

ՄԷՐԵԼԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Կը տեսնեմ որ օրը տարածամած է, եւ խնդիրն ստիպողաբար քուէարկելի. ուստի վիճարանութիւն չդրողելու համար առ այժմ ետ կանոնում բա-

բեփոխումն, եւ կը վերապահեմ զայն ուրիշ առթի :

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Բացատրելու համար ձեզ թէ հարցապնդմանց մէջ որքան ազատութիւն ունին երեսփոխանք Եւրոպական խորհրդարանաց մէջ, եւ թէ ինչ օգուտ կը ծնի աստի, գործնական օրինակ մը կուղեմ տալ եւ վերջացնել խօսքս այս նիւթին վրայ : Ամէնքդ ալ զիտէք որ այս օրերս Անգլիոյ Լօրտերու խորհրդարանին մէջ հարցապնդում եղաւ Հայկական խնդրոյն վրայ. յայտնի է որ Անգլիական պաշտօնէութիւնը շատ գուրգուրացող չէ մեր ազգին վրայ, եւ խորհրդարանի մէջ մեծագոյն մաս մ'ունի իրեն պաշտպան, որոյ չնորհիւր կանգուն կեցած՝ կը վարէ իշխանութիւն : Արդ՝ եթէ Լօրտ Քարնարվոն՝ հարցապնդելու իրաւունք չունենար եւ կամ անոր առաջարկութիւնը ժողովին կանխաւ հաճութեանը ենթարկուէր, կը կարծէք որ մեր ազգին համար խօսք մ'անգամ արտասանուէր Լօրտերու խորհրդարանին մէջ :

ԱՏՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդիրը լուսաբանուած կը տեսնեմ, եւ կուղեմ ժողովին հարցընել թէ կուզէ վիճարանութիւնը փակել :

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին վիճարանութեան փակումը քուէի զնելով ժողովը միաձայն կ'ընդունի զայն : Յետոյ քուէի կը դնէ անմիջապէս Ե. յօդուածը զոր ժողովը միաձայն կ'ընդունի ըստ բացատրութեան Ստեփան փաշայի եւ կանցնի յաջորդ յօդուածին :

(Եւ Ատենապետ փաշայն կանցնի իւր աթոռը)

Յօդ. 2. Ազգ. ժողովն երեք անգամով եւ լեւտից Յանձնախումբ մը կընտրէ իր մէջէն, որ ազգային պիտուէին մէջ Ազգ. ժողովոյ համար առաջնութեամբ գումարը Վարչութենէն ընդունելով՝ կը հողայ ժողովին տպագրական այլ եւ այլ ծախքերը, եւ տարեգլխին հաշիւը կը ներկայէ ժողովին, որ կը հաղորդէ զայն Վարչութեան :

ԱՏՆԱՊԵՏ ՓԱՇԱ. Սոյն յօդուածն ար-

դէն ընդունուած է եւ այսօր տեսնին սկիզբը ժողովն կըլեւտից յանձնախումբն ընտրեց փոխանակ երեքի՝ չորս անգամով, եւ ոչ միայն ժողովին տպագրական, այլ եւ ուրիշ ամեն կարգի ծախքերը մատակարարելու պաշտօնով, հետեւապէս ըստ այսմ սրբազրելի է սոյն յօդուածը :

Ատենապետ փաշայն սոյն գլխադրութեամբ քուէի կը դնէ 2. յօդուածն եւ ժողովը կ'ընդունի զայն արդէն կատարուած բարեփոխումներով, եւ կանցնի յաջորդ եւ վերջին յօդուածին :

Յօդ. Է. Ազգ. ժողովին կանոնական նիստերուն օրն ու տեղին պատշաճ տեսած ատեն՝ Ս. Նախագահը Մայր դիւանին հետ կանխաւ խորհրդակցելով կորոչէ հարկ եղած փոփոխութիւնը :

ԱԼԱՃԱՃԵԱՆ Հ. ԷՖ. — Ես կառաջարկեմ որ Ս. Նախագահը երբ ուզէ ժողովատեղին փոփոխել, ոչ թէ միայն Մայր դիւանին, այլ նոյն իսկ ժողովոյս հետ խորհրդակցի կանխաւ, եւ այնուհետեւ փոփոխութիւնը կատարէ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Իրաւացի է Ալաճաճեան էֆէնտի ըսածն, երբ ժողովոյ սովորական նիստերուն նկատմամբ փոփոխութիւն մ'ընել հարկ լինի, ինչպէս եղաւ չորս տարի առաջ Ազգ. ժողովը Մայր Եկեղեցին փոխադրուելով, բայց այս կանոնն արտաքոյ կարգի պարագայից համար կը դրուի. երբ Ս. Նախագահը կատարուի այլուր փոխադրել ժողովը, որու հետ բնականաբար կանխաւ խորհրդակցելու ժամանակ չունենար :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ես կընդունիմ սա պայմանաւ սակայն որ Ս. Պատրիարքը այսպիսի փոփոխութիւն մը կատարած ատեն՝ յաջորդ նիստին պէտք եղած բացատրութիւնը տայ ժողովին :

ՄԷՐԵԼԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Ես կարծեմ թէ բնաւ որ եւ է բարեփոխման հարկ չկայ, վասն զի երբ Ս. Նախագահը հարկ տեսնէ փոփոխութեան պիտի հարկադրուի կանխաւ դի-

ւանին հետ բանակցել, իսկ ժողովը միշտ կրնայ բացատրութիւն պահանջել, եւ երբ ուզէ իրենց ցոյց տրուած գումարման տեղին փոփոխել, որու դէմ ոչ ոք կրնայ արդեւ յարուցանել:

ՆՈՒՍՈՒՑԵԱՆ ԷՑ. — Ես ալ կը հաստատեմ որ այս յօդուածն որ եւ է բարեփոխման չկարօտիր, եւ կառաջարկեմ ընդունել զայն նոյնութեամբ:

ԱԼԱՃԱՃԵԱՆ Է. ԷՑ. — Կաղաչեմ որ յօդուածը միանգամ եւս կարդացուի:

( Կը կրկնուի ընթերցումը )

ԱԼԱՃԱՃԵԱՆ Է. ԷՑ. — Կը տեսնէք որ այս յօդուածին տրամադրութիւնն ոչ թէ արտաքոյ կարգի պարագայից համար է, այլ կանոնական նիստերուն կը վերաբերի:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. Բացարձակ կերպով դրուած չէ, ինչ պարագայի մէջ ալ փոփոխութիւն մ'ընել հարկ լինի, պէտք է դիւանին խորհրդակցութեամբն ըլլայ:

ԱԼԱՃԱՃԵԱՆ Է. ԷՑ. — Կը յիշէք որ ուրիշ անգամ մ'առանց ժողովին հաւանութեան փոխուեցաւ գումարման տեղին, եւ Սրբազան Պատրիարքը յայնժամ Մայր Եկեղեցին փոխարեւոյ ժողովը, որ չուզեց շարունակ մնալ հոն եւ հոս փոխադրուեցաւ վերստին: Այսպիսի դէպքերու կրկնութեանց տեղի չթողելու համար է որ կըսեմ թէ ժողովին խորհրդակցութեամբն եւ որոշմամբը լինի որ եւ է փոփոխութիւն որ իրեն կը վերաբերի:

Ժողովը փակելով վիճաբանութիւնը Ատենապետ փաշան քուէի կը դնէ նախ Ալաճաճեան էֆէնտիի առաջարկած փարեփոխումը, զոր ժողովը ԶԸՆԴՈՒՆԻՐ, յետոյ քուէի կը դնէ յօդուածը, եւ ժողովը մեծադոյն մասամբ կ'ընդունի զայն անփոփոխ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. Ըստ ներքին կանոնադրութեան օրինական ծրագիրը երեակ

քուէէ պէտք է անցնին, բայց ըստ որում ըստ արտադրութիւն ունի ներկայացեալ ծրագիրը, ուստի պարզ որոշման եղանակին ենթարկեալ համարելով զայն՝ վերջին քուէ մ'եւս պիտի խնդրեմ պնտր ընդհանրութեան վրայ:

Ժողովը կը հաւանի այս դիտողութեան, հետեւապէս Ատենապետ փաշան նոյն եօթը կանոնադրական յօդուածոց ընդհանրութիւնն քուէի կը դնէ եւ ժողովը միաձայն կ'ընդունի զայն:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Յառաջիկայ նիստըն ըստ որոշման ութը օրէն է եւ դռնփակ, Խորհրդարանական Յանձնախումբին համարատուութեանը համար, սակայն արգելք չկայ նաեւ ուրիշ խնդրովք զբաղելու, երբ ժողովը ժամանակ գտնէ:

Հետեւապէս Օրակարգ կը սահմանուի յառաջիկայ նիստին:

- 1. Հարցապնդում Հայկական խնդրոյ վրայ. — Հայաստանի անունն Քիւրտիստան կոչուելուն, Աւինոյ վիճակին եւ Հայկական դաւառաց մէջ դաղթականութիւններ հաստատուելուն եւ ընդհանրապէս Խորհրդարանական Յանձնախումբին պաշտօնավարութեան նկատմամբ (դռնփակ):
- 2. Խնդիր վերաքննութեան Սահմանադրութեան. — Վիճաբանութիւն նախաձեռնութեան դիւանի տեղեկագրոյն (դռնբաց):

Հրածարում Էրեսփոխանաց

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կանոնը կը արամադրէ որ յաջորդարար երեք անգամ ժողովոյ նիստերէն բացակայ գտնուող երեսփոխանը հրածարեալ համարուի, իբրեւ պարտազանց, եւ անաւասիկ:

Տ. Գէորգ քահանայ Արժրունի  
Տ. Արիստակէս ՝ Մամբրէեան:

Յարութիւն էֆ. Զէնճիրճեան  
Յակոբ ՝ Ամասեան

չորս յաջորդական նիստերէ բացակայ գրտնուած են: Բայց ասոնցմէ Տ. Գէորգ քահանայ Արժրունի խոր ծերութեան հասած է, Տ. Արիստակէս նոյնպէս կամ անոր մօտ. Զէնճիրճեան էֆէնտի պաշտօնով դուրս գացած եւ թերեւս ժամանակ չէ գտած իւր հրածարականը հաղորդելու, այս ալ ի նպաստ իւր բացակայութեան՝ մեղմացուցիչ պարագայ մ'է, իսկ Ամասեան էֆէնտի ոչ կը ներկայանայ, ոչ հրածարական կուտայ, եւ ոչ իրեն ուղղուած կոչնադրերը կ'ընդունի:

Ատենապետ փաշան քուէի կը դնէ սոյն երեսփոխանաց ըստ կանոնի հրածարումը, եւ ժողովը միաձայն հրածարեալ կ'ընդունի զանոնք, միայն Ամասեան էֆէնտին պարտազանց չ'ընդունի:

Առաջարկութիւն Ղազարոսեան Քրիստոստուր Էֆէնտիի՝ Քաղ. ժողովոյ պակաս անդամոց ընտրութեան վրայ

Երեսփոխան Ղազարոսեան էֆէնտիի կողմէ մատուցեալ յետագայ առաջարկութիւնը կարդացուեցաւ:

Վսեմախոյլ Ատենապետ


Չորս անգամ պակաս կայ Քաղ. ժողովէն, որոց անունները նշանակուած են արձանագրութեան մէջ, անոնցմէ դուրս եւս կը լսեմ հրածարեալ կայ, կառաջարկեմ որ ըստ Սահմանադրութեան պակաս անդամոց ընտրութիւնը կատարուի:

22 Յունիս 1879 Ք. Ղազարոսեան

Ս. ՆԱԻԳԱԷ. — Քաղ. ժողովը պատրաստուած է արդէն յառաջիկայ նիստին սոյն խնդիրը բերել Ազգ. ժողովոյ:

Ատենը կը գոցուի ժամ 10 ին:

Ատենադպիր Ատենապետ  
Մ. ՄԷԼԻՔԵԱՆ Ս. ԱՍԼՅԵՆԱՆ



**ԱՁԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

**ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ**

1	Տ.	Մկրտիչ	Ս.	Արքեպս.	Խրիմեան	Ա.	Ա. Կենտրոն
2	Տ.	Խորէն	Ս.	»	Նար-պէյ		
3	Տ.	Կարապետ	Ս.	Եպս.	Սերովբեան		
4	Տ.	Մատթէոս	Ս.	»	Իզմիրլեան	Բ.	Ա. Կենտրոն
5	Տ.	Ամբրոսիոս	Ծ.	Վրդ.	Ռուբինեան		
6	Տ.	Գարեգին	Ծ.	»	Թաթարեան		
7	Տ.	Եղնիկ	Ծ.	»	Ապահունի (Առաջ. պաշտօնիւ դուրս		
8	Տ.	Իգնատիոս	Ծ.	»	Շիշմեան		գացած)
9	Տ.	Հմայեակ	Ծ.	»	Դիմաքեան		
10	Տ.	Ներսէս	Ծ.	»	Ասլանեան		
11	Տ.	Պողոս	Ծ.	»	Խօլտամեան		
12	Տ.	Արիստակէս	Ա. ազ.	Քհնյ.	Մամբրէեան		
13	Տ.	Խորէն	»	»	Փէհրիվանեան	Բ.	Ա. Կենտրոն
14		Սահակ	»	»	Տ. Սարգիսեան	Ա.	Ա. Կենտրոն

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ**

1	Առաքել	էֆէնտի	Ալթուն	Տիւրքի	Ա.	Ա. Կենտրոն
2	Գէորգ	»	Սահմարանեան		Ա.	Ա. Կենտրոն
3	Գէորգ	»	Գըլբեան			
4	Գարրիէլ	»	Եսայեան			
5	Լօղօֆէթ	»	Պալեօղեան			
6	Աբել	»	Կիւլպէնկեան		(	Հրաժարեալ)
7	Մարտիրոս	»	Միւհննտիսեան			
8	Մկրտիչ	»	Յրէնկեան			
9	Յակոբ	»	Չօպանեան			
10	Ղազարոս	»	Հովուեան		(	Հրաժարեալ)
11	Սահակ	»	Ղազարոսեան			
12	Յակոբ	»	Ծերունեան		(	Հրաժարեալ)
13	Ստեփան	»	Պէյլիկեան		Բ.	Ա. Կենտրոն
14	Խաչատուր	Խան	Տ. Նէրսիսեան			

ՄԱՐԿՈՍԻ ԱՊՈՍՏՈՍԱԿԱՆ ԵՎԱՆԳԵԼԻՍ

Մարկոսի Եվանգելիս	1
Մարկոսի Եվանգելիս	2
Մարկոսի Եվանգելիս	3
Մարկոսի Եվանգելիս	4
Մարկոսի Եվանգելիս	5
Մարկոսի Եվանգելիս	6
Մարկոսի Եվանգելիս	7
Մարկոսի Եվանգելիս	8
Մարկոսի Եվանգելիս	9
Մարկոսի Եվանգելիս	10
Մարկոսի Եվանգելիս	11
Մարկոսի Եվանգելիս	12
Մարկոսի Եվանգելիս	13
Մարկոսի Եվանգելիս	14

**Գլխի 2 որոշ**

**ՍԵՓԷԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ**

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՑ ԾԱԽՈՒՑ ՅԱՏԿԱՑԵԱԼ**

Ազգային ժողովոց ծախուց Յատկացեալ	1
Ազգային ժողովոց ծախուց Յատկացեալ	2
Ազգային ժողովոց ծախուց Յատկացեալ	3
Ազգային ժողովոց ծախուց Յատկացեալ	4
Ազգային ժողովոց ծախուց Յատկացեալ	5
Ազգային ժողովոց ծախուց Յատկացեալ	6
Ազգային ժողովոց ծախուց Յատկացեալ	7
Ազգային ժողովոց ծախուց Յատկացեալ	8
Ազգային ժողովոց ծախուց Յատկացեալ	9
Ազգային ժողովոց ծախուց Յատկացեալ	10
Ազգային ժողովոց ծախուց Յատկացեալ	11
Ազգային ժողովոց ծախուց Յատկացեալ	12

Կը ծախուցի ի Դիւանատան Պատրիարքարանի Է. Ղալաբիոյ Ս. Լուսաւորիչ  
Եկեղեցւոյ բանկայը Է. Հայ գրափառագրաց բով